




9 (ԿԴ. 995)

761

85 Հովհաննեսյան, Ա.
պատիկցը ուրբան հայկա-
կանքի Տաթև:

954.

• 26 •




ԱՐՏԱՎԱՐԱՆՆԻՑԱՆՆԵ

„ՀԱԽ“

ՊԱՆՏՎՅՈՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻ ՎԱՐԴԱՏԻ
ՄԱՍԻՆ

ԹԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

1 9 2 7



(47.995)
- 85

✓

ԱՇԽԱՏԱԿԱՐԱՆ

„Q U. H.“

ԳԱՅԻ ԿԱՅԱՐԱԿ ԹԱՎԱՐ ՀԱՅԱԿԱՆ ՄԻ ՎԱՐՄԱՆՏԵՐ ՄԱՍԻՆ



ԳԵՂԱՔԻ ՀՐԱՄԱՆԱԴՐՈՒՅԹ

8ԵՐԵՎԱՆ

1927

ՀԱՅՈՒՆԵԳՐԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՏՈՎԱՐԱՆ
ԹԱՏՎԵՐ 2492.
ԳՐԱԴ. 119 Բ., ՏԻՐԱԺ 3000

I.

**Դ. ԱՆԱՌՈՒՆԻՎ ՎԵՐՋԻՆ ՀԱՏՈՐԸ ՅԵՎ ՆՐԱ ԾՈՒՐՋԸ
ՎԵՐՍԿՎՎԱԾ ԳՐԱԿԱՆ ԱՐԾԱՎԱՆՔԸ**

Հաղիով մի քանի ամիս ե , ինչ Դ. Անանունի հրատարակությամբ վենետիկի Միխիթարյան տպարանում լույս և տեսել նրա «Թուառահայերի հասարակական գարզացման» յերրորդ հատորը : Առում ենք՝ հաղիով մի քանի ամիս ե , բայց զիրքը դարձել ե արդեն «նշան ժամանակի» : Դ. Անանունը խորհրդածությունների առաջ նյութ ե մասակարարել նախ և առաջ արտասահմանի գաշնակցական մատուցին : Մեզանում զես նոր և ստացվում զիրքը : Սակայն հեղինակի անունն արդեն «բերնի վրա յե» , չորսիլ այն յուրահատուկ ուշադրության , վոր արժանացըն նրան վերջներս ընկ . ե . Սուրենի «Յերկու տեսնդենց» վերնադրով «Մարտակոչ»-ի №№ 26-33-ում տպագրված Փեյնանները ...

Ինչի՞ մասին և խոսքը : Վարսնք ենք այն հայտնությունները , վոր արդքան աշխատյժ են վուել Միխիթարյան վանքի մենությունից լույս աշխարհ ընկած արդ հատորի շուրջը^{*)} :

Հատորի մեջ հեղինակը կամենում ե ներկայացնել ուռասահայերի հասարակական գարզացման 1901—1918 թվականներն ընդդրկող ըրջանը : Կենարունական հարցը՝ հեղինակի այս ունախընթաց հատորներում՝ «հայության հավաքման» խնդիրն ե : Այլ խոսքով՝ ուռասահայերի՝ վորպես ազգության՝ տնտեսական-քաղաքական ինքնորոշման , նրանց «ազգաշխնության» և ազգային-քաղաքական «աղատազբաման» պրոբլեմը : Յերրորդ հատորը հավակնում և տալ հենց հեղինակին դրազեցնող ոլրորիմի լուծումը : «Հայության հավաքման» «հին պատգամը» ավարտում է իր աշխատանքը ... 1918 թ . մայիսի 28-ին :

Հեղինակը համաձայն չե հայ «առաջին մարդությանների» այն անսակետի հետ , թե ուսւ պետականության այս կամ այն կա-

^{*)} Մենք առիթ կունենանք վերագանալու . Դ. Անանունի դրբեն : Այս անգ ծանրանում ենք զրա վրա այնշափ , վորչափ այդ անհրաժեշտ և ներկա նորմածում արժարժվող նյութը , լուսարաններու աեսակետից :

ոռուցվածքը «համագարման և ազգային կարիքների ու տրատունշների դեմ»:

Քաղաքացին, նրա կարծիքով, ապրում եր «յերկճշի քաղաքական կյանքով»—ազգային և համապետական: «Դեսլի միջադայնություն ազգաշխնության կամուրջով» այսպես և պատկերանում դ. Անանունին ոռուահայերի հասարակական զարգացման ընթացքը (աես եջ 407): Հեղինակը կշտամբում և հայ մարքարիստներին, վորոնք ժառանգ չկանգնեցին նախընթաց շրջանի «աղդային-հեղափոխական շարժման»:

«Մեր առաջին մարքարիստները—գրում և նա—դեմ հանդիման յեկան մի լայն շարժման: Իրանք չեյին այն հրահրել կամ տեսաբանորեն հիմնավորել: Յեվլ վարովհետեւ իրանք անցյալի ժխտումն եյին՝ ժառանգ չը կանդնեցին և անցյալից բղիստ շարժմանը, համարելով այն կղերաբուրժում առաջական մաքի արգասիք: Կովի տաք վայրկյանին ոս հասկանալի վերաբերմունք եր, բայց վոչ որինակելի: Յերբ առաջին որերի հապճեալ վորոշումը գանձնում և հարատե գործունեյության ուղեցույց՝ այն արդեն սայթոքումն եր» (եջ 408): «Այս «սայթաբառումը» պատճառ յեղալ, վոր մարքսիստները «վողնաշարը շարդած մի ժողովուրդ դարձան», իսկ Դաշնակցությունը նստած մնաց «հայության» «ազգային զպացումների և անձեւ սպասումների խանձարուրի մոտ» (եջ 411-12): «Նրանց—այսինքն մարքսիստների—ազգաշխնությունը կերպարանք չուներ, իսկ Դաշնակցության գործելակերպի հաջող ու սուր քննազառությունը շրջանակ չեր գառնում, վոր հայկական մեղուն իր մեղրահացը հյուսեր»: «Մնաց վոր հեղափոխությունը, այսինքն՝ գործնականը լուծե այն, և մարքսիստները զնան շարվելու պատրաստի սեղանի շուրջը: Իսկ թե գործնականը, առանց լուսասողի, առանց գաղափարականն ուղեցույցի, հպատակվելով կույր տարերքին միայն՝ ի՞նչ տանջանքներով և լուծում ինդիրը,—այդ մասին մենք լը-ռում ենք» (եջ 418):

«Հայությունը—նոր Պենելոպա—իր ազատաբար վոդիսելոր գտավ ոռուական հեղափոխության մեջ»: (Առաջարան): Փույթ չե, թե սպասածին հակառակ, այդ հեղափոխությունը պատեց բուրժուական պետականության շրջանակը և ինքնորոշեց վորպես պրոլետարական հեղափոխություն: «Հայության վիեկը հեկեղինակը վստահանում և «բանվորական թուսաստանին»: Հայրանիվոր դասակարգը, ունկնդրելով պատմության թերաղրանքին,

կոչված և իրադործելու «պատմության կտակը»։ Հրաժարվել այդ կտակից նու չի էարող անպատիւ։

«Հայության ինքնուրացման դեմ պիտի ծառանա բանվորական Ռուսաստանը, քանի նա ընթանում և սոցիալիզմի դրոշակի տակ և կամենում և ազատագրել իրան թե բոնարար շրջանի ժառանգությունից և թե մեր որերի դայթակղությունից» (Աջ 693)։

Այս Դ. Անանունի գրեթե 700 հջ բոնող այս գրքի գաղափարական ֆոնը։ Այդ ֆոնի վրա յէ, վոր գծագրվում են սուսահույրի հասարակական զարգացման յերկու տասնամյակի ուղղորդերը՝ անձերով և անցքերով։

Հավատարիմ մնալով նացիոնալիստական իր ըմբռնումներին՝ հեղինակը քննադատական ընդարձակ եներ և նվիրում դաշնակցական «ազգաշխնության» պրակտիկային։ Այս առիթ և տվել դաշնակցականներից վոմանց—մասնավորապես Ա. Վարացյանին—վերապահ զիրք բննելու։ Դ. Անանունի գրքի նկատմամբ։ Մի ուրիշը—Մ. Վարանդյանը—ընդհանուր մակարդակի վրա դնելով Դ. Անանունի այս աշխատությունն ու Լեոյի «Անցյալիցը» ակնարկ և անում այն մասին, թե յերկու հեղինակների գործերն ել տպագրվել են Զեկայի արտօնությամբ և նրա ցուցմունքներով։

«Յերեանի կառավարությունը ձրիարար, անշահափնդուրեն չի տար նման առանձնաշնորհումներ և այս պարագային ալ գիտցել ե բավական սուղ գնով ծախել իր ընձեռուած արտօնությունը... Յերեանի վարիչները կը գուրզուրան այդ «չեղողք» պատմագիրներու վրա, ամեն կերպ կը քաջալերեն անոնց պատմագրական փորձերը, նույնիսկ կը հանգուրժեն անոնց այս կամ այն ուրույն ժեստը, ուրույն անկախ կարծիքները՝ փոխարենը ստանալու համար Հ. Հ. Դաշնակցության վերջնական սնանկացումի ու փլուզումի վկայագիրներ»։ («Հայրենիք» ամսագիր, 1926 թ., նոյեմբեր, Աջ 69)։

Ընդհանարարես, սակայն, դաշնակցական քննադատաները վողշումնեցին Դ. Անանունի հատորի յերեսումը—նկատելով այն իրենց հետապնդած «ազգաշխնական» նպատակների սկզբունքային զատագովուրյուն՝ «անաշատ» յերրորդի գրչով։ Դաշնակցական իդեոլոգիայի իմունիֆներն այնքան են խարխլված այսոր, վոր նրա ներկայացուցիչները պատրաստ են ճաշակել լախտի ու ճիսուտի ամեն մի հարված, կրել անձնական ամեն մի թուք ու մուր—միայն թե շահարդավի «սրբություն սրբոցը», այն «հին պատգամը», վորին ծա-

ռայել և կուսակցությունը տասնամյակների բախտախնդիր և արկածավոր իր գործունեյության ընթացքում : Ի՞նչը կարող եր ավելի դյուրին ու ձեռնոտու լինել, քան այն, վոր լրագրական հանրարարների հետամուտ դաշնակցական պարապ զբակները (Արտ. Արեգյան, Վ. Ահարոնյան և Վ. Նավասարդյան) ամեն չափ ու սահման հեզույթի իրենց «ուեցենցներով» մի ավելորդ առիթ վորսային Դ. Անանունի աշխատության մեջ՝ նորոգելու իրենց զբական արշավանքը Հայաստանի կոմմունիստական կուսակցության, խորհրդային իշխանության և նրա զեկավարների դեմ...

Ընկ Ե. Սուրենի լայնածավալ ֆելետոնները դայիս են քննության հարատապ նյութ դարձնելու Դ. Անանունի հատորը նաև խորհրդագային մամուլի հջերում : Ֆելետոնների նյութը, ըստ յերեկույթին, նույնպես կարծես Դ. Անանունն և, սակայն փաստորեն ընկ . Ե. Սուրենի համար ևս Դ. Անանունի հատորն ավելի շուտ դրական-քաղաքական յելույթի տոփիք և, քան ըստն նպատակի : «Մարտակոչ»-ի տասն և վեց եների վրա փուլած «սպազմաներից» ընկ . Ե. Սուրենը նվիրում է այդ հատորին հազիվ յերկու-յերեքը : Յեկ սա հասկանալի յե : Անանունի գիրքը Ե. Սուրենը համարում և լոկ «բամբասադիրք», կամ «լրագրական չարամիտ հոդվածների շարան» :

Զի՞ ժխտվում դրանով Դ. Անանունի գեմ լրջորեն սպայքարելու հարկը, և քաղաքական թեթևամիտ սխալ չե՞ նմանութինակ ժխտումը : Բամբասանքն ու չարամիտ եղերն, իրոք, վորոշ տեղ են բըռնում Անանունի գրքում : Վրգովիչ փաստ և, անշուշտ, վոր ընդհանուր վերագնահատության յենթարկելով «հայ մարքսիստների» աշխատանքը, կըտամբանքներ ուղղելով նրանց հասցեյին, Անանունը նկատի ունի ամենից առաջ Ռ. Ա. Դ. Բ. Կ. հայ անդամներին և ամենից շատ բայց եկելոյան հին գվարդիայի հայ ներկայացուցիչներին՝ ընկ . Ստ . Շահումյանին, Ս. Սպանդարյանին, Ս. Կասյանին և այլն : Ճիշտ և, «ազգաշնուռթյան» իր թեսրիայի ահասկետից հեղինակը քննալատական և վերապահ խսոք ունի նաև Ս. Դ. Բ. Հայ կազմակերպության՝ սպեցիֆիկների մասին : Առանձնապես՝ նա չի խնայում Ալ . Մյասնիկյանին և Ալ . Խուրենուն : Սակայն, յեթե Անանունի գիրքն ունի առհմատարակ վորեւե հերոս, զա հենց ինքը Հայ կազմակերպությունն և՝ սպեցիֆիզմը՝ հատկապես բոլոր սպեցիֆիկների մեջ ամենից յելորդն ու հետեւու-

կոմը՝ ինքը հեղինակը, «անհաղթ վիլիսովիա» Դավիթ Անանունը։ Զուր չե, վոր ոռւսահայերի հասարակական զարգացման պատմագիրը զբքի մեջ հեղինակը ամենից առատորեն մեջքերումներ և առում հենց իր հին լրագրական հոդվածներից։ Ինքն իրենով հափշտակված Նարցիսի անհշան «ցիտատներից» մեկը հենց բոնում եղբքի 38 էջը (տես էջ 614—52)։

Սակայն՝ արձանագրելով զբքի զավեշտական այս հանգամանքը, անհերելի սխալ կը լիներ անտեսել «մարքոփոտական» Փրազիոլոգիայի բարակ շերտի տակ թագնված աղքայնական մտայնության այն հետևողական տեսակետն ու յուրօրինակ հիմնավորումը, վոր ամփոփված և Դ. Անանունի գրքում։ Սոսկ «բամբառագիրք» հայտարարել Անանունի յերեք հատորը, նշանակում երացածներ նրա գեմ հիմնավոր պայքար տանելու կարիքը։ Կամ՝ բավականանալ սոսկ Փելեւտոնական մարզանքներով, ստեղծելով մեր խոկ շարքերում այն պատրանքը, թե այդ ճանապահով խոկ հնարավոր և վերացնել նացիոնալիստական իդեոլոգիայի ուժայի վանակը։ Քննադատության այս յեղանակը, յեթե միայն սիստեմ զառնա այն, կարող է միայն մթաքնել մեր պայքարի հեռանկարները և գյուրացնել մեզ ներհակ իդեոլոգիայի ներգործությունը մասսաների վրա։ Զուր չե, վոր ժամանակին ընկ. Շահումյանը հարկ համարեց ծանրանալ առանձնապես Դ. Անանունի՝ աղդային-կուլտուրական ավտոնոմիայի տեսության վրա։

«Դ. Անանունին մենք չենք դասում այսուղ Բախչիների թվում։ Մենք նրա հետ սկզբունքային վեճ ենք մղում՝ ցույց տալու համար, վոր նա իր աշխարհայացքով և իր առաջադրած աղքային ծրագրով հեռու յե մարզուղմից, վոր նա, ըստ ամենայնի, մի սոսկ նացիոնալիստ է։ Դրա հետ միասին, և այդ ամենից գլխավորն է մեզ համար, —վորովհետեւ Դ. Անի գրական-հասարակական դեմքն ինքնըստինքյան հետաքրքրություն չի ներկայացնում, —մենք ուզում ենք ցույց տալ, վոր աղդային-կուլտուրական ավտոնոմիան մի վնասակար և հետազիմական պահանջ ե»։

Այդպես եր գրում տարիներ առաջ Դ. Անանունի մասին ընկ. Շահումյանը (Այախ, «Աղդային-կուլտուրական ավտոնոմիայի ժաման», Թալիրիզ, 1914, էջ 4)։ Այդ տողերը գրելուց հետո շատ ջուր և հսկել։ Դ. Անանունը զարգացման մի ամբողջ շրջան և կատարել գաղղային-կուլտուրական ավտոնոմիայի» թեորիայից գեղի «Հայության հավաքման թեորիան» և այդ թեորիայի վերջնական

ամփոփումը՝ յերրորդ հասորում։ Զենք կարող ասել, վոր դրանով նվազել և ինքնըստինքյան հեղինակի «գրական-հաստրակական դեմքի» հետաքրքրությունը։ Տեղի ունի ըստ յերեռւյթին հակառակը։ Այդ են ապացուցանում դաշնակցականների հորդաբուզի ռեցենզները։ Յեկ այդ և կամենում, կարծես, նշել նաև «Յերկու տենդենցի» հեղինակը, վորը սակայն խուստփում և խկական պայքարից՝ նացիոնալիստական իգեոլոգիայի գեմ և միանգամայն դեպի այլ կողմն և ուղղում իր այնալու հրացանի դունչը . . .

Դ. Անանունի գրքում ընկ. Ե. Սուրենին գրավեցնողը սպեցիֆիզմի «պատմական ծառայության» հնոր հիմունիզն» և Վորն և այդ «հիմունիզի» բովանդակությունն ըստ Ե. Սուրենի Այն, վոր «սրբագործելով Հայաստանում կատարված իրերադանու իրերընթացքը» Դ. Անանունը փորձ և անում հայ պրոլետարիատի մինչ-հոկտեմբերյան պայքարի և հետ-հոկտեմբերյան հաղթակի ղեկավարությունը—

«պայքանավորել կոմմունիստական կուսակցության թշնամի հոսանքների դործունեցությամբ, հենց լենինյան ստեղծագործ մաքի պարտությամբ» («Մարտակոյ», № 26)։

Հետեւով Քաջազնունու որինակին՝ Դ. Անանունին այլ բան չի մնում անել, քանի դիմել ուգրպազիայի։

«Այսինքն Հայութարարել, թե այն, ինչ կատարվել է և կատարվում և մեր յերկրում՝ վերջին Հաշվում դա միայն շարունակությունն ե դաշնակ-սպեցիֆիկյան վազուց Հայտնի ջանքերի, թե այն՝ ինչ անում և (լսեցեք սուանց փոթկաւու) կոմմունիստական կուսակցությունը Հայաստանում՝ դա վոչ ավելի և վոչ պակաս, քան դաշնակ-սպեցիֆիկյան հակահզարիության վազուց ընդգրկած դաշնարանների ու նախագծված նպատակների սոսկ ձևավորումն և . . .» (Ե. տ. № 27)։

Իր հոգվածի վերջում, ընկ. Ե. Սուրենը յեղրակացնում է այս սոթիզ՝

«Հակահեղափոխությունը, վոր Հայակական իրականության մեջ ասել և միայն դաշնակիզմ, իգեոլոգիական վորոնումներ և կատարում ներս սոոդալ մեր շարքերը իր սոցիալիստական վարիանու սպեցիֆիզմի դիմակի տակ։ Կոտ, վոր միենույնն ե».

«Հակահեղափոխությունը փորձում և սպրէել խորհրդացին իրականությունը սոցիալիզմի դաշնակցական վարիանու սպեցիֆիզմի միջոցով» (Ե. տ. № 33)։

Բնկ. Ե. Սուրենի նշած «Հիպոթեզը» ինքնըստինքյան «նոր» չէ: Նոր և միայն նրա կիրառումը Խորհրդային Հայաստանի վերաբերմամբ: Քննադատելով 1916 թ. Մ. Գորկիի խմբագրությամբ լույս տեսած «Сборник армянской литературы» ժողովածուի՝ Դ. Անանոնի ներածական հոդվածը՝ Առ. Շահումյանը գրում եր ժամանակին՝

«Թոսելով 1905 թվին և նրանից քիչ առաջ հայկական կյանքում յերեան յեկած նոր հոսանքների և ազգեցությունների մասին նա, —այսինքն Դ. Անանունը—վոչ մի խոսքով չի հշում այն ազգեցության մասին, վոր ունեցել և հայկական կյանքում համառուսական մարքսիստների կուսակցությունը: Բայց լուսության տալով այն գործը, վոր կատարել և այդ կուսակցությունը, ինքը ընդհանրապես և նրա գրոշակի տակ աշխատող հայ մարքսիստները մասնավորապես, Դ. Անանունը մեծամիտ սպարծենկուսությամբ հայտարարում և իրեւ խոչոր սպամական յերեությայի կայկան կյանքում, վոր 1904 թվին առաջ և յեկել մի նոր կուսակցություն՝ «Армянская Социал-Демократическая Рабочая Партия»... Այդ նշանակում ե, վոր մարդիկ այրվում են ուկիւտի և ինքնազովուրբյան ախտով և շապում են մտնել պատմուրբյան մեջ» («Պայֆար», 1916, № 3):

«Պատմության մեջ մտնելու» այս հին մարմաջն և հենց, վոր շարունակում և գեր կատարել Դ. Անանունի աշխատության մեջ նուև: Հասարակական-քաղաքական հարաբերությունների նոր պայմաններում: Նոր պայմաններում, այն ձեակերպում և քաղաքացիական կոփիների մեջ պարտված բուրժուազիայի և իր կուսակցությունների գաղափարական վերաբերման յուրաքանչայտ այն մտայնությունը, վոր հրապարակ յեկավ ուսւ եմի գրացիայի շրջանում ամենովիխովլյան իր հայցքներով: Այդ հայցքներն անզբաղարձնում են պարտված բուրժուազիայի և իր կուսակցությունների համակերպարտական տաքտիկան:

Կառկածից վեր և, վոր բուրժուազիայի այդ տաքտիկան հայտարար և ինքյան խորհրդային իշխանուրբյան և կոմմունիստական կուսակցուրբյան ամբարձման: Աակայն՝ այսպես չե ըմբռնում յերեվույթն ընկ. Ե. Սուրենը: Նրա «Յերկու տենդենցը» հետամտում և հիմնական մի տենդենց—ապացուցել, թէ յարարինակ հայկական ամենովիխիզմը հայտարար և հայաստանի կոմմունիստական կուսակցուրբյան տնտեսական դրուրբյան, նրա դեկավարուրբյան և գծի

սպիտառման : Դուրս և գալիս , վոր համակերպվազը մեղանում մեր հակառակորդները չեն , այլ մենք , մեր կուսակցական դեկտվարությունը :

Դ . Անանունի հասորը միայն առիթ և հեղինակի հաժար՝ սղբանշելու այս «յերեսույթը» և խաչակրաց արշավանք սկսելու հանուն կուսակցության բայլչեփելյան գծի պաշտպանության : Դովելի ջանք , յեթե միայն մանրազնին քննությունից հետո այն չը մերկանա վորպես «ձախ» պանիկյորության հայկական մի վարիանու : Կամ , յեթե հարձակման մոլեգնությունը ճակատագրականորեն չը ներգանակեր այն արշավանքի հետ , վոր Դ . Անանունի վերջին հասորի առթիվ , ձեռնարկել են նացիոնալիստական բանակի գրչի ասպետները Խորհրդային Հայաստանի և նրա ուղեղծի գեմ :

II.

**Ե. ՍՈՒՐԵՆԻ ՀԱՐՁԱԿՈՂԱԿԱՆԸ ԿԱՄ՝ ԱՆՈՒՆԸ ԿԱ—
ԱՄԱՆՈՒՄԸ ԶԿԱ**

Ամենախոշոր վասնդն այն չէ, ի հարկե, վոր պատմության
բալոր գիրքերից վատրված սպեցիֆիկմն աճապարում և նորից
«մանել պատմության մեջ» : Ամենախոշոր վասնդն այն է, վոր :

«Ուրիշ կուսակցությունից մեզ ժառանգություն ան-
ցած հաստ ու կնտելիքենաներ արամազիք են յեզել
ճանաչել սպեցիֆիկմի «պատմական ծառայությունները»
բայլչեիկական պայքարում, կարծես լույլան համաձայնել .
թե այսորվա խորհրդային իրականությունը Հայաստանում
հետեւանք և խայտառակ Բախչիի, մեշշան Ռուբենիի, ան-
գամ ողիսդ Անանունի և ելի մի յերկու սպեցիֆիկյան սովոր-
ների բրանաթոր աշխատանքների մասնակցության («Մար-
տակաչ», № 32) :

Սակայն կա՞ , իրոք, զոյսություն ունի՞ այդպիսի մի վասնդ ,
վորպես ուշադ փառա : Ընկ . Ե . Սուրենը դրական պատասխան ունի
այս հարցին : Յեկ նա շատպում և «ազգանշել» կոնկրետ շոշափելի
«փաստերով» այդ վասնդը : Այդ «փաստերին» է , վոր պարտավոր
ենք ծանոթանալ առաջին հերթին :

Առաջին օփասոց : ընկ . Ե . Սուրենը խոհեմարար թագցրել է
ծանոթություններից մեկում : 1922 թ . Եջմիածնի «Բանքեր»-ի
եջերում Դ . Անանունը լույս բնծայեց մի ուեցենզ մեր «Հայ-ռուս
որիենտացիայի ծագման խնդիրը» դրքի մասին : Ուեցենզի հեղի-
նակին ակնարկելով մի տեղ Հայաստանի խորհրդային իշխանության
դեկանականներին՝ վորակել եր նրանց «արդի հայ մելիքներ» բառե-
րով : Վերջիշելով այդ փաստը , Ե . Սուրենը զետեղում և հետե-
ւալ ծանոթությունը՝ «Տես . . . նաև այդ առթիվ բանավեճ Սերո
Մանուցյանի և Աշոտ Հովհաննիսյանի մեջ» («Մարտակաչ» ,
№ 27) : Դուքս և դալիս , վոր ընկ . Մանուցյանի հետ ըստ եյտ-
րյան բանավեճ ենք ունեցել Անանունի ուեցենզի կամ վոր միե-
նույնն և . . . սպեցիֆիկմի սովորիվ , կամ կարող և ստացվել այն
սպավորությունը , թե ըստ եյտրյան անհամաձայն ենք յեզել

Մանուցյանի կողմից Դ. Անանունի այդ ռեցենզին, կամ վոր միևնույնն ե...սովորիֆիզմին արած առարկություններին : Ինչի՞ մասին և խոսքը : Մանուցյանի այդ առարկությունների առթիվ «Խորհրդային Հայաստան»-ի 1922 թ. № 217-ում զետեղել էնք «քաղաքավարի» մի նամակ, վորտեղ խնդրում ենք ուղղել իր հողվածի մեջ, Դ. Անանունի դրածի հիման վրա, մեղ վերագրած սխալ մի միտքը : Իր պատասխանի մեջ ընկ. Մանուցյանը համերաշխելով մեզ հետ՝ փոխում և «բանավեճը» : (Տես ն. ա. № 228) : Ահա և բոլորը : Խուզ ակնարկի ողնությամբ ընթերցողին տարակուսանքի մեջ ձգելու այս նույնը չի անցնում : Յեվ ահա ընկ. Ե. Սուրենը շտապում և հրապարակի վրա դնել ավելի «չոշոփելի» յերկրորդ «փաստը» :

Յերկրորդ «փաստ»: Հայաստանի իստորարափ հրատարակությամբ, 1924 թվին, լույս է տեսել Յեր. Մելք-Յուջյանի «Զորստարի Հայաստանի բանվորական շարժման պատմության» (1903—1907)» աշխատառթյունը : Բարեխիվզ և ուշագրավ մի դորձ, վորտեղ յերիտասարդ հեղինակը կուտակել և գրքի վերնադրին համապատասխանող հարուստ նյութ և ստանց վորեւե մեկին անպատճառ խոցելու կամ մեծարելու գիտավորության՝ փորձ արել ուրվազծելու Հայաստանի բանվորական շարժման չորս տարիք պատմությունը : Մասնավորապես նա ջանք չե ինայել՝ հայացելու և զետեղելու գրքում այն բոլոր նյութերը, վոր վերաբերում են Ստ. Շահումյանի, Ա. Սպանդարյանի և նրանց ընկերների Հայաստանում կատարած աշխատանքներին : Սակայն, «Խորհրդապային Հայաստան»-ի եջերում, խմբագրական անփութության չորհիվ, ժամանակին հրապարակ յեկավ հինավուրց մենչեկի Գ. Ղարաջյանը, վորը մեղագրեց ընկ. Յուլյանի ուսումնասիրության մեթոդը սպեցիֆիստական թեքման մեջ : Հավատարիմ մնալով գրքի վերանդրին՝ հեղինակը զուրս չեր յեկել Հայաստանի բանվորական շարժման նեղ շրջանակներից : Նու զրազվել եր Հայաստանի և վոչ՝ հայ բանվորական շարժման անցյալով : Հեղինակին ամփոփում և նյութը վոչ թե ազգային, այլ՝ տերիտորիալ սահմանների մեջ : Յեվ անդամ Հայաստանի տերիտորիայի սահմաններում՝ նա ծանրանում և նաև հեղափոխական շարժման այնպիսի յերեւյթների վրա, վոր չեն կազմում անմիջապես կամ բացառապես հայ բանվորական շարժման հետ : Որինակ՝ պիտօնարդյունագործու-

թյան և յերկաթուղարքին բանվորների գործադուլուները, Ալեքսանդրապոլի դիմուրական դարնիցոնի կատարած հեղափոխական աշխատանքները և այլն: Կառկածից զուրս ե, վոր հեղինակի այս մերձեցումը մերոդական նպատակահարմարության խնդիր և միայն և առնչություն չունի քաղաքական վորհեն թեքման հետ: Բնիկը Յուլյանը կարող եր իրավունք վերտապէհնել իրեն՝ զրազվելու թեկուդ հենց վորհեն զավաոի բանվորական շարժման անցյալը, առանց հիմք տալու, վոր նրան զավառամսության մեջ մեզադրեն: Անձնապես իր անցյալով հեղինակը կապված չեր յեղել սպեցիֆիզմի հետ: Իսկ զրքի մեջ նա հայտնաբերում և միայն բացատական վերաբերմունք դեպի սպեցիֆիզմը: Յեզ վո՞րտեղից և Հայանի, ի դեպ, վոր սպեցիֆիզմը յերեկե դժած լինի իր աշխատանքի կամ ուսումնասիրության շրջանը տերրիտորիայի նշանով: Զե՞ վոր կարող եր վորեն հիմք լինել հեղինակին «սպեցիֆիզմի» մեջ մեզադրելու, յեթե նա ներկայացրած լիներ Հայաստանի կամ Անդրկովկասի բանվորական շարժումը՝ դնելով այն հենց ազգային ըրջանակների մեջ:

«Հեղինակը—դրում եր Ղարաջյանը—շարժման նկարագիրը տալիս ե՝ նկատի առնելով միայն ներկա Խորհրդային Հայաստանի տերրիտորիայի սահմանները, մինչդեռ հայ բանվորական-սոցիալիստական շարժումը սահմանափակել Հայարնակ մի քանի դալաններով, նշանակում և միայն շարժման կմախքը տալ»: («Մ. Հ.», 1924, № 263):

«Հայ բանվորական շարժման պատմությունը»... Ինչո՞ւ անորածանո՞ւ «Հայ»: Վո՞րտեղ և առված այդ: Կարդացեք դոնե քննադատած դրքի վերնագիրը: Կամ կարծո՞ւմ եք, վոր ընկ Յուլյանն այլ նպատակ եւ ունեցել, քան միայն տալ «շարժման կմախքը», նրա ուրվագիծը: Կարդացեք զեթ դրքի առաջարանը: Նրա նպատակն ե յեղել ներկայացնել Հայաստանի բանվորական շարժման քառամյա պատմության ուրվագիծը: Յեզ այդ նպատակին ել նա հասել և վորոշ չափով: Ինքը՝ Ղարաջյանը հենց այդ և խոսուվանում:

«Ենչ վերաբերում և սոցիալ-գեմոկրատական նախնական և հետազա աշխատանքներին Հայաստանի դավաներում՝ հեղինակը նրանց վերաբերյալ պատմական նկարագիր տալիս և բազմաթիվ փառացի տեղեկություններով (հ. առ.)»:

Աւրեմն ել ինչի՞ մասին և վեճը: Դժվար չե դուշակել: Ամփոփ-

վելով վորոշ տերբիստարիայի և վորոշ ժամանակաշրջանի մեջ՝ հեղինակը պարտավորված չի տեսնել իրեն՝ ծանրանալու Հայաստանի սահմաններից դուրս գործող առաջին հայ մարքսիստների մասուցած ծառայության վրա, թեև միաժամանակ չի անդիտացել նրանց ունեցած ազդեցությունը Հայաստանի 1903—07 թվականների բանվորուկան շարժման վրա։ Շատ հարգելի Ղարաջանի զժողոհությունը մարդկայնորեն հասկանալ կարելի յէ, հարկավ։ Մակայն, քաղաքական հետեւթյուններ անել դրա հիման վրա՝ ներելի չե։ Յեւլ, համենայն գեպս, ընկ. Ե. Սուրենի մեղաղբանքը այս կետում, նրա նշած այս «փաստը» ևս բացահայտվում է վորպես լիակատար բլյոֆ։ Պետք ե միայն ցավել, վոր «Ա. Հ.» խմբագրությունը կամ մեր խստապարտը, չը նախատեսելով Ե. Սուրենի այսորվա յելույթը, չեն կանխել այդ՝ հատուկ հերքումով։ Մակայն Ե. Սուրենը գրապանում ունի մի յերրորդ «փաստ»։

Ցերուոց «փաստ»։ Պետհրատը լույս և ընծայել Վ. Տերյանի, յերկերը՝ ակադեմիական հրատարակությմար։ Վոչ վոք չի վիճում, վոր իր տեսակի մեջ Վ. Տերյանը դասական հեղինակ է, հեղինակ, վորի յերկերը բնորոշում են զրական զարգացման մ/ամբողջ համապատասխան վիճակին ուսումնաակիւթյան։ Բայց հնարավո՞ր և այդ՝ առանց նրա գործերի լիակատար հրատարակության։ Վոչ, ի հարկե, և խմբագրող ընկ. Մակինցյանը լույս և ընծայել Տերյանի լիակատար գործերն անխափիր, առանց հարկ տեսնելու վորեե վերապահության։ Յեւլ ահա Ե. Սուրենն ամբողջ յերկու պատվալ և նվիրում Տերյանի գործերին, մեջբերումներ և անում պոետի սպեցիիիկյան շրջանի աղդայնական-պատրիոտիքական չի ու չփոթ դատապահություններից—դատապահություններ, վորոնք այսոր վոչ վոքի մոլորության մեջ ձգել չեն կարող, —նպատակ ունենալով խոցելու վոչ թե իրեն՝ «գժբախտ» պոետին (ըստ Ե. Սոլոր մեռածները «գժբախտ» են...), այլ նրա գործերը խմբագրողին և մանավանդ՝ Հայաստանի Պետհրատին։

«Պետհրատը սոսկ տեխնիքական հրատարակչական կամ վերահրատարակչական ապարատ չե, զուրկ իդեոլոգիական բովանդակությունից։ Ալկազեմիական հրատարակությունը մենք այնուամենայնիվ այնպես չենք հասկանում, ինչպես Հայաստանի սեյիդները» («Մարտակոչ», № 30)։

Ծնկ. Ե. Սուրենը գտնում է, վոր չեր կարելի հրատարակի

վրա զնել Տերյանի «բաղդմերանդ» ժառանգությունն՝ առանց «խըմ-բագրական վերլուծականիք» և «վերապահության»։ Մինչայժմ մեզ հայտնի չի եւ վոչ մի տեղ ակադեմիական նման հրատարակություն։ Վերջինիս նպատակն անմիջական վերլուծությունը չեւ, այլ զբա նախապատրաստությունը միայն։ Բնկ. Ե. Սուրենը նոր ըմբռնում և մացնում արար աշխարհում ընդունված հասկացողության մեջ։ Բայց ինչո՞ւ այստեղ «իդեոլոգիական» սայթաքում անողը Հայաստանի «սէյխովներն» են եւ վոչ ինքը՝ գիտական աշխատանքի մեթոդը սեյխական խեղաթյուրման յննթարկող ընկեր. Ե. Սուրենը՝ մնում եւ անբացարկելի։ Սակայն սրանով զես չի փակվում Ե. Սուրենի «փաստերի» շարքը։ Նա տուած եւ քաշում չորսրդ «փաստը»։

Տուրուզ «Փաստ»։ 1922 թվին, «Առորհզային Հայաստան» թերթի 79 համարում, մի քանի հոգվածներ են զետեղվել յերբեմնի սովորակի Ալ. Ռուբենու հիշատակին։ Ա՞վ ե Ալ. Ռուբենին։ 1918 թվից մուսավաթական Աղբբեջանում Ալ. Ռուբենին (Շատուրը) գործել եւ մեր չարքերում, Աղբբեջանի կոմկուսի կողմից նշանակվել Դարարագիք՝ շրջանային կոմիտեյի անդամ, իսկ 1920 թ. դաշնակիների ավանդայութայի ժամանակ գլխատվել վորպես բայլընիկ։ «Ա. Հ.» զետեղած մի հոգվածում, վոր պատկանում եւ մեր գրչին, ծանրացել ենք հասկապես Ալ. Ռուբենու քաղաքական եվլոյսոցիայի վրա։ Մեր նպատակն ե յեղել զծել անհատական կյանքի այն ուղին, վոր առաջնորդել ե նրան մեր կուսակցության չարքերը։ Կանոց առնելով Ռուբենու կենսագրության սովորակի հաստական ըրդանիք վրա՝ հանձնին Ալ. Ռուբենու՝ դրվատել ենք 1903—07 թվականներին սովեցիֆիկների շարքերում յերեան յեկած այն տաղանդավոր ժառանգականին, վորին—ըստ նայած մեշշանական իր ծագման և իրեն հատուկ «ասիստական» գանուղկուսությանը գործնականում—վիճակված եր վնասական հրաժարիմք առելու նացիոնալիստական-գուշնակցական իդեոլոգիային և մշտել հետզհետե հեղափոխական-մարքսիստական աշխարհայացք։ Դաշնակցության դեմ վարած պայքարի մեջ

«Ծառաւրը» (իմա, Ալ. Ռուբենին) որ որի եւ գաստիարակվում եր վորպես հեղափոխական մարքսիստ, և դիրք բռնում ու արդեցություն վաստակում վորպես նոր գողագիտական պատգամաբուռ։

Այսպես ենք գրել մենք: Յեվ ահա ընկ. Ե. Սուրենը ընդգծում ե այստեղ հանդիպող «Հեղափոխական մարքսիստ» տերմինը: Ընկ. Ե. Սուրենը յենթագրում ե բառ յերեսույթին, վոր հետեղական բայլշենիկը կարող եր խոսել Ալ. Ռուբենու «որն որին» աճող «զուհիկ մարքսիզմի» մասին միայն: Սակայն ընկ. Ե. Ա. չի յել կասկածում, ի հարկե, վոր նման յենթագրույթյամբ նա միայն սահում-զլորվում ե ուղղակի... Դ. Անահունի, «աղիսկ Դավիթի» գիրկը, հարազատանալով նրան, վորպես համախոհ: Խնդրում ենք ընթերցողին սպառապինվել համբերությամբ և ուշադիր կարդալ այն, ինչ Դ. Անահունին կրել Ալ. Ռուբենու մաշվան առթիվ:

«Ենելով բանվորական կաղմակերպչական ինքնորոշման կողմնակից՝ նա անարամարանորեն դեմ եր աղջային կուլտուրական ավտոհոմիային: Մեր աղջային միջավայրի խոչոր յերեսույթի նկատմամբ, գեղի Հ. Հ. Դաշնակցությունը, նա ամելավաճանորեն պահպանեց ժխտողական վերաբերութիւն:

Ալ. Ռուբենիի մարքսիզմը մնաց անավարտ: Անջատվելով՝ Դաշնակցությունից՝ նա նորահավատի չերժեանդությամբ իրան հերձյալ համարեց հին զավանանքից և հրշառականներից: Նա չը կամեցավ կամ ժամանակ չունեցավ սառն վերագնահատության յենթարկելու մեր հիմն նըշ-մարտությունը», վորպիսին հանդիպանում և Հ. Հ. Դաշնակցության խենուզգիան, և ուղղումներ մոցնելու իր վերաբերմնանի մեջ: Արեւելյան ասացվածքի պես նո նմանվեց այն քաջին, վորի խոռքը մնում ե անփոփոխ, անդամ յեթե սիսալ և այն: Այս գեղագում, իմ խոր համոզունքով, պակաս գեր չը կատարեց Ալ. Ռուբենիի մարքսիզմի անավարտությունը: 1904—1906 թվականներին նա այնքան ընտելացավ մարքսիզմին, վոր կարող եր համարձակությամբ քարկոծել Հ. Հ. Դաշնակցության այդ լրջանի յերերուն իդեոլոգիան և վարանու քաղաքականությունը: Բայց հետագայում նա չը խորացավ իր դավանած ուսմունքի մեջ, վորովհետեւ ընդհանրապես զանազան պատճառներով կանգ առավ նրա հոգեւոր կյանքը: Այս պատճառով ել մարքսիզմի նրբությունը և հասու զենքը մնացին նրա համար անմատչելի իրանց հզրությամբ:

Գոեհիկ մարքսիզմը հոխորտավից և: «Յեկա, տեսա, հաղթեցի»—այս ե նրա զոհերի մտավոր պաշարը: Գոեհիկ մարքսիզմը պարզունակ և և մատչելի նույնիսկ ծույլ ուղեղներին: Գոեհիկ մարքսիզմը Ռուսաստանում իր ջերմաց-

ման մշտական անկյունն և սանեցի բայլշենիկական հոսանքում։ Ալ. Ռուբենին մարքսիզմին հարելով՝ միաժամանակ դարձավ բայլշենիկական ուղղության յերկրպագու։ Այսպես եր նա, յերք չերմ մասնակցություն եր ցույց տալիս Ա. Դ. Բ. Հ. Կ. գործերին, իբրև նրա կենտրոնի անդամ և զաղափարախոս։ Այսպես մնաց, յերք վերջին տարիներու հեռու մնալով իիշյալ կազմակերպության աշխատանքներից, մերս բարեկամացավ պաշտոնական բայլշենիկաների հետ» (տես «Հայաստանի կոոպերացիա», 1920, № 14)։

Դ. Անանունի բացասական այս բնութագիրը Ալ. Ռուբենու և նրա մարքսիզմի մասին՝ լավագույն, զրական վկայաթուղթն և վերջինիս վերաբերմամբ։ Անանունը կշտամբում և Ռուբենուն այն առթիվ, վոր վերջինիս բաղադրական եվոլյուցիան չընթացավ իրա՞ Անանունի, ինչպես նաև սրա անբաժան ընկեր Բ. Իշմանյանի գծով։ Մի գիծ, վոր նետեց նրանց «Հին ճշմարտության»՝ Դաշնակցության—սկզբանքային ջատագովության ու գործնականացարական ուսագույնության դիրէը։ Անանունը «գուեհիկ մարքուղթ» և հոչակում Ալ. Ռուբենու համար պայքարը Դաշնակցության դեմ և նրա աստիճանական մերձնեցումը բայլշենիկներին։ Մենք «որն որին աճող», «հեղափոխական մարքուղթ» ենք համարել նրա վճռական հրաժարմակմքը Դաշնակցությունից և մերձնեցումը բայլշենիկներին։ Առաջ հետ և համերաշխում Ե. Սուրենը։ Յերր զիր եյինք առնում մեր բնույթագիրը Ալ. Ռուբենու մասին՝ մեր սեղանի վրա յեր Անանունի գրածը։ Մեր բնորոշումով ցանկանում եյինք միայն հերքել Դ. Անանունին։ Իսկ ո՞ւմ և կամենում հերքել ընկ. Ե. Սուրենը։ Պարզ ե պատասխանը։ Նրա հերքումն ուղղված է մեր դիմ։ Նա համերաշխ և Դ. Անանունի հետ։ Ե. Սուրենը «ոգիսդ Դալլի» լարած զաղափարական թակարդի թաղրտացող զոհն և։

Սակայն ընկ. Ե. Սուրենը նշում և սպեցիֆիզմի» (sic!) «պատմական ծառայությունը» նշող մեր մի յերկրորդ «խոսափանությունը»։ Խոսելով Դաշնակցության դեմ Ալ. Ռուբենու արած յելույթների մասին, մենք գրել ենք։

«Մոքի սուր գիտեքաթիկայով, հոեառական աճող տաղանդով նա սատանում եր անպարտ պոլիմիստի հոչակ Անգրիովկասի հայաշատ կենտրոններում»։

Խոսելով այդ հոչակից մասին, արձանագրել ենք միայն փասումը։ Փաստ, վոր դժվար թե կարողանա չխոստովանել 1905—06 թիվականները հիշող սերունդը։ Կարելի յեր այդ «հոչակը» տարա-



ծող վկայություններ բերել վոչ միայն ժամանակի սպեցիֆիկան որպաններից և լիբերալ «Մշակություն» այլի բայլը իրավութերթից (տես «Մեր Խոռք», 1906, № 6 «Ընկեր Ալ. Ռուբենիկի զառախոսության առթիվ» վերնագրի ներքո Վաղարշապատից ուղղված նամակը, վորտեղ թղթակիցը համերաշխելով Ալ. Ռուբենու հետ՝ հշշատակում և նրա սուր և մերկացնող առարկությունները Դաշնակցության հին և նոր ծրագրեների գեմ): Այլ բան, ի հարկե, թե վորքան այսոր կարող ենք համերաշխել Ալ. Ռուբենու գրավոր ու բանավոր հին յելույթների հետ ըստ եյուքյան, արդարացի կամ անարդար համարել նրա պոլեմիքական յելույթների մտսին տուրածված կարծիքն ըստ նրանց արժանիքի: Խոսելով Հայ-թրքական ջարդերի առթիվ նրա արած գեկուցման մասին, մենք գրել ենք՝

«Ավելի հետեւողական և ավելի խորահայոց վերտնտությունն այսոր կարող և սկզբունքային թերություններ ու սայթաքումներ մտանանչել իր այդ ուրբիչ գործերի մեջ: Ժամանակակից մտառն ու լարանն արտահայտում եր խոնդավառ հիացում, անորոշ կատաղություն միայն»:

Հնթերցողը նկատում է յերեխ, վոր ընկ. Ե. Սուրենի նշած մեր այս յերկրորդ «թեքումից» և մի գատարկ ու թաց տեղ միայն մնաց: Սակայն ընկ. Ե. Սուրենը չի հռուսատվում: Գտատարկ ու թաց տեղը նա աշխատում է լցնել նոր, «չոչափելի», ողարտնությամբ:

Նա բերում և մեր գրած հոգվածից այսպիսի մի «սենսացիոն» քաղված ևս՝

«Ավելի մշակված, ավելի ամբողջացած ու պայքարի տեսակետից ավելի անմիջական նպատակ ունեն իր այն հոգվածները, վոր չոշափում են սոցիալ-դեմոկրատիայի կադրական խնդիրները»:

Իր զերն ավելի համեստ յեղավ, քան պետք եր յենթագրել իր տաղանդի չափից և իր գործի աղմկահույզ սկզբնավորությունից, իր խոսքն ու գործը չունեցալ քաղաքական արժանիկ կշիռ ու նշանակություն: Իր գործունեյության ըրջանը սեղմվեց, ամփոփելով հեղափոխական մարքությունի գրավոր և բանավոր պրոպագանդի մեջ»:

Այս ցիտատը չը նախապաշարված ընթերցողին կարող և բերէ այն համոզման, թե ընկ. Ե. Սուրենը հասնում և նպատակին վառապես ակտուակտ: Զե՞ վոր բերած ցիտատից կարելի յե միայն հանել այն յեղակացությունը, վորպիսին հանում և ինքը և. Սուրենը:

Զե՞ն վոր ողարդ է, վոր բերած տողերը հեղինակը ցողում է, վոր Ալ-
Ռուքենու մշակած կազմակերպչական սխսնեմը չը հասալ հետա-
պրնդած նպաստակին, չը ստացավ քաղաքական արժանի կշիռ ու
նշանակություն... Աակայն ընթերցողի անհախապաշար ուղղողը
կարող է ստանալ այդ տպավորությունը միայն ջնորհիվ է. Սուրե-
նի գործադրած մի պրիումի, վոր շատ վառ կերպով հիշեցնում է միւ-
այն «խայտառակ» Բախչի կիրառած մկրատման մեթոդը Բերլինի
ժամանակարանում : Բնկ . Ե . Սուրենը մկրատի ոգնությամբ հեռա-
ցրել է խնամքով վերը բերած ցիտատի առաջին և յերկրորդ պար-
բերությունների արանքում յեղած ընդարձակ մի հատված, վորով
խարդախվում է միանգամայն այդ ցիտատի, ինչպես նաև մեր ամ-
բողջ հոգվածի իմաստը :

Խնայելով ընթերցողի համբերությունը, չենք ուզում բերել
այսակ բաց թողնված բնդարձակ այդ հասվածը : Այդ հասվածով,
ինչպես նաև մեր հոգվածով հետաքրքրություններին կարող ենք հանձ-
նաբարել այս որես «Յերկու ընույթապիր» վերնազրով մեր լույս
ընծայած բրոցյուրը, վորոնեղ արտասալված և մեր հոգվածը Ալ-
Ռուքենու ժամանի : Հասվածի, ինչպես նաև ամբողջ հոգվածի ի-
մասար հենց այն է, վոր Ռուքենու մշտկած կազմակերպչական
սիստեմը գարձալ ամիլիսյան գարշապար նրա համար, այսինքն՝
աղղային-կազմակերպչական «սովեցիֆիկ» մտավախության այն
աղղյուրը, «վորի վերազանց տարերքից—ինչպես ասված եւ-պիտի
«թալկանար» Մատուրի հեղափոխական թափը, խունանար իր սահոդ-
ծարար կարողությունը» : Մողեցիֆիկիների կազմակերպչական սիս-
տեմը «Բունդի» կազմակերպչական սիստեմի հայկական այն վա-
րիանուն եր, վոր պետք ե գար առաջնորդելու ավելի հետեւզական
«սովեցիֆիկիներին» գետի նույն «Բունդի» ազգային-կուլտուրական
ուժունումիայի ծրագիրը, իսկ հետազոյւմ ավարտեր սովեցիֆիկ-
իների քաղաքական կարյերը, ինչպես գրիմած և նույն հոգվածում՝
«Հայոց նոր Արշակավանում—Թավրիզում» : Նշելով այնուհետեւ
այն հանգամանքը, վոր Մատուրին վիճակինց մեղանում սովասա-
ծից ամելի համեստ գեր, վոր նա, չը հայած իր անձնական միրքին
ու նրա մասին յեղած համարումին, «չունեցավ քաղաքական արժա-
նի կշիռ ու նշանակություն»՝ մենք այս յերեւոյթն իսկ ընդարձակ
մի այլ հատվածի մեջ—հասված, վոր ընկ . Ե . Սուրենի սուր մըկ-
րասր նույնպես հեռացրել երացարտում ենք կազմակերպչական
հարցում երա հատարած նակատազրական սայթքումվ :

«Վոչ այդ կազմակերպությունը (այսինքն՝ Ս.Դ.Բ.Հ.Կ.) , — զրել ենք մենք—վոչ իր իղեական պարագուխը չելին կարող զեկավարի զիբը զըսավել Անդրկովկասի բանվորական շարժման մեջ , քանի վոր դրել եյին իրանց աշխատանքը հեղափոխական պայքարի կազմակերպության սխալ հունի մեջ : Հայ բանվորական զանդվածներն իսկ զնացին այն զեկավարների հետևից , վորոնք անցնելով բանվորական միջազգային կազմակերպության շարքերը , կարողացան միաժամանակ ուժի և ազգեցություն նվաճել նաև ազգային կյանքի ներդաշնակներում» :

Ինչպես տեսնում եք , այստեղ ես վոչինչ չը մնաց սպեցիֆիկ-մից : Անունը կա , ամանումը չկա : Կա միայն վրկարար այն մկրտուր , վոր այնքան վարպետորեն Ե . Սուրենը թոցրել և սպեցիֆիկմի դրական լաբորատորիայից :

Անցնենք սակայն Ե . Սուրենի մկրտառած հինդերորդ և վերջին «վաստինք» :

Հինգերորդ «վաստած» : Հինդերորդը՝ չորրորդի շարունակությունն ե : Նույն ե թեման , նույն ե անդամ աղբյուրը : «Խորհրդային Հայաստան»-ի 1922 թվի նույն № 79-ը , վորտեղ տպագրվել ե Ալ . Ռուբենու հիշատակին մի այլ հոդված : Հեղինակը «ուրիշ կուսակցությունից մեղ ժառանդություն անցած հատ ու կիսու ինտելիգենցիաներից» մեկն ե՝ Ալ . Մարտունին :

Իր այդ հոդվածի մեջ Մարտունին այն միտքն է հայոնել , թե Հայ կյանքում , վորպես մարքսիստ հեղինակ Ալ . Ռուբենին առաջինն է յեղած : Կովկասյան մասշտարով վորպես մարքսիստ հեղինակի նրան համեմատել ե Ժորգանիայի հետ , — (համեմատություն , վորով Մարտունին չի կամենում , ի հարկե , նշած լինել վերջինիության կերպանցությունը կամ մարքսիստական արժանիքը , այլ միայն նրա , իրքի բնողմանվոր հեղինակի յերբենն վայելած համարումը) : Հոդվածի հեղինակը գտնում է այնուհետև , վոր Ռուբենու քերեթափական նշանակությունը դեռ չի զնահատված : Ավելի նպաստավոր պայմաններում՝ նա կարող կը լիներ տեղ լունել նույնիսկ «Խուսաստանյան մարքսիզմի ասպարիզում» : «Այսոր նա մեզ մոտ կենարոնում կը լիներ , մեր կոմմունիստական պարբերությունը կը լիներ անշուշտ» : Այնուամենայնիվ ավարդյուն չանցավ նաև այն , ինչ արեց փաստորեն մեզանում Ալ . Ռուբենին : «Հայկական մարքսիզմը , Հայ բոլշևիզմը , Հայաստանի կոմմունիզմը—դեռև և Մարտունին—այսոր ուժեղ և ապրում ե ի թիվս այլոց և չնորհիլ Ռուբենու , նրա թափած աշխատանքի ու վոթած արյան» :

Ե. Սուրենը Մարտունու հոդվածը «Խորհրդային Հայտառան» թերթի «առաջնորդող» և հոչակում : «Առաջնորդողի» հանդամանք չունի այդ հոդվածը : Տպված և սովորական կորպուսով, կրում և հեղինակի ստորագրությունը, թեև գրավում և թերթի մեջ առաջին տեղը : Համեմատությունների ու «չափերի» համար ամբողջ պատասխանավորթյունը պետք է թողնել միայն իրեն՝ հեղինակին :

Ալ. Մարտունու հիպերոլիկ վորակումները հասկանալու համար հարկավոր և նկատի ունենալ, վոր հեղինակը զրում և իր յերիտասարդական տարիների մասին ընկերոջ մասին և, ինչպես ասված և հոդվածի սկզբում՝ նրա «յեղերական մահվան սարսուցուցիչ պատերի» ներչնչման տակ : Մարտունին ճանաչում եր թուրքենուն վորովես հայ կազմակերպության այն անդամին, վորը ստանձնել եր հայկական նացիոնալիզմի գեմ տարած դադարակական պայքարի ժանրությունը : Պայքար, վոր նա տարավ համառորեն և թողեց յերիտասարդ սերնդի հիշողության մեջ շոշափելի հետք :

Տարորինակ կը լիներ յենթալրել, թե Մարտունու գնահատականը հասկանալու համար կարիք կա անպատճառ պեղումներ կատարել հեղինակի սպեցիֆիտական անցյալի մեջ, նշել նրա սպեցիֆիտական անցյալը : Քաղաքական-դադարակական թեքման մասին խոսելու համար հարկավոր են այլ կարգի տվյալներ, ավելի ամրոջական և համապարփակ, և մատայնության ընդհանուր ուղղություն բնորոշող : Բայց այլ տեսակետից միամառություն չի կարծել, թե մեծարելով թուրքենուն անհատապիս, Ալ. Մարտունին կամեցել և ուստի լիտացյալի յենթարկել մեզ դեմ պայքարող վորեն հավաքանություն կամ հոսանք :

Մեր առաջն և հիմա Աղբբեշանի կոմիտսի կենտրոնական և Բագլի կոմիտեյի որդան «Կոմմունիստ»-ի 1923 թ. ապլիլի 13-ի համարը, նվիրված նույն թուրքենու հիշատակին : Այս համարում զետեղված է ընկ. Ս. Մանուցյանի լիրիքական զեղումներով իլ մի հոդվածը, վոր կրում և «Այց Ալ. Թուրքենու գերեզմանին» բնորոշ վերնագիրը : Զետեղված և նույնիսկ թուրքենու գերեզմանի նկարը : Մանուցյանն այցի յե զնացել գերեզմանին 1923 թ. մարտի 14-ին, կուսակցության 25-ամյակի որը : Յեզ այդ 25-ամյակը նա «առնում» եր փոխադրվելով «տեղական, միջաւայրին հատուկ հիշողությունների» աշխարհը... Սակայն Մանուցյանն անցյալում կազմակերպչական վորել կապ չի ունեցել թուրքենու հետ : Նույնքան քիչ կապ և ունեցել գերջինիս հետ նաև «Կոմմունիստ»-ի առաջին հոդվածի բառ :

Պիյերը : Հիմալուրց բայլշնիկ ե ընկ. **Պիյերը**, գրեթե՝ կուսակցական քաղաքարիարք» : Բայց ահա, թե ինչպիսի տողերով ե ոկտում նա իր հոգվածը.

«Նորից մի տարի :

Մեծ հեղափոխության ամսման վրիժների անմեռ ընակիչից մեկի շիրմին այցելության, վերհիշելու, վերհուշելու մի որ...

Ալեքսանդր Ծառուրյան :

Մի անոն, վոր յերբեք չե ջնջվելու հեղափոխության պատմության եջնրից, վոր առասպելական վոչ մի կետա կարող ե պոկել նրան իր ընկերների և ապագա սերնդի որտեց՝ ժողոացության զիրկը նետելու համար...

Յերեք տարի առաջ գիտական մարքսիզմի հայ սյուներից մեկն ել ընկալմահ մահ ընդունելով թերեւ այն ձեռքից, վորոնց ազատագրման եր ուխտած իր բոլոր կյանքը...» Յերեայլն, և այլն :

Այստեղ ես հիպերբռլիկ համեմատություններին, կսամիքական շափերին վերառահված ե առանձնահատուկ տեղ... Թվում ե գրեթե, վոր վոճի, ճաշակի, յերեակայության հարց ե սա : Յեկ թվում ե, վոր ամենից շատ հասկանալի, մարդկայանորեն հասկանալի պիտի լինի յերեակայության ու չափերի այս հիպերարտֆիան հենց իրեն՝ ընկ. Ե. Սուրենին : Զե՞ վոր—ինչպիս կտեսնենք դեռ—հենց այդ տեսակետից ե, վոր նա մըցակից չունի հայոց «առհմային» դրականության մեջ...

Ե. Սուրենը «ցավալի թյուրիմացություն» ե համարում Ալ-Մարտունու հոգվածը : Բայց այդ չե խանդարում նրան «մտցնելու» կոմունիստական շարժման, բայլշենիկյան պամության մեջ այլ «ցավալի թյուրիմացությունը» : Հասկանում ենք, ի հարկի, նուե այս առաջարկի գեթ հոգերանական հիմքը : Բանվորական շարժման ու պատմության անցյալն ընկ. Ե. Սուրենի դիտակցության մեջ անդրադառնում ե չարանակ վորովես առանձին եղիղողների կամ թյուրիմացությունների, անհատական հերոսությունների, առանձինի ու աննման կամ խայտառակ ու ոգիով անձերի ու դեպքերի մի կատարյալ ժխոր : Ընկ. Ե. Սուրենը կարող ե, ի հարկե, չարունակել զերեվմանափորի քրանաթոր աշխատանքն անցյալի այս ժխորում : Բայց պետք ե վոր հանգիստ գիր խական շարժումն ու պատմությունը, վորովին ըմբռոնելու համար անհրաժեշտ ե ունենալ յերեւոյթներն ու ժողովն իբրար կրցելու փոքր ինչ այլ կարողություն ե ամենից առաջ այն, ինչ պահանջել ե ժողոանակին Զերնիշելսկին... «մաքուր խիզճ և աղջիս ժխորուներ» :

III.

ԴԻԱԼԵԿՏԻԿԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻ ԶԵՎ ԳՈՒՍՏՆԱԿԱՆ
ՊԱՏՄԱՀԱՅԵՑԵՐՈՒԹՅԱՆ ՅԵՐԿՈՒ ՏԵՆԴԵՆՑ ԱՆՑՅԱԼԻ
ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐՈՒՄ ԿԱՄ ԸՆԿ. Ե. ՍՈՒՐԵՆԸ

Ս. ԾԱՀՈՒՄՑԱՆԻ ԴԵՄ

Խնդչ և սպեցիֆիզմը :

Ահա մի հարց, վոր հետաքրքրում է շատերին, մանավանդ նը-
րանց, վորոնց խմասության աղբյուրը սպեցիֆիզմի մասին՝ մինչ
այսոր հանդիսացել են միայն Ե. Սուրենի հոգեպարար Փելետոն-
ները :

Մինչդեռ հարցի պատասխանը մեր կուսակցությունը վաղուց
ավել ե, և այդ պատասխանի սպառիչ, մատերիալիստական-մարք-
սիստական ամփոփումը արել և արդեն ընկ. Ս. Շահումյանը :

Այդ ամփոփումը ծանօթ և նաև ընկ. Ե. Սուրենին, վորը,
ըստ յերեսութիւն, համամիտ չլինելով Շահումյանին, «Մարտա-
կոչ»-ի № 32-ում Ակրատի և դուրս և ձգել Շահումյանից քաղած
մի հատվածում նրա այն տեղը, ուր ձևակերպված է հեղինակի
տեսակետը սպեցիֆիզմի մասին: «Պայքար»-ի 1916 թ. № 33-ում
ընկ. Ս. Շահումյանը գրել է —

«Հայտնի յե, վոր 1904 թվին համառուսական մարք-
սիստների մեջ աշխատող մի յերկու ինտելիգենտ միանալով
նույնքան նախկին դաշնակցական կիսաինտելիգենտների
հետ, հիմնեցին (հետական Բունդին նմանելու ցանկությամբ)՝
մի կազմակերպություն: Վոր կոչվեց «Բանվորական հայ
կազմակերպություն»: Սկզբում չնորհիվ իրենց հին դաշնակ-
ցական կապերի, նրանք ունեցին իրենց հետ վորոշ թվով հայ
բանվորներ և մի խումբ ուսանող յերիտասարդներ: Փամա-
նակի ընթացքում նրանց միջից կենսունակ տարրերը, ինտե-
լիգենտ թե բանվոր, միացան համառուսական կուսակցու-
թյանը, իսկ մնացածները՝ առաջին իսկ ռեակցիայի ազդե-
ցության տակ՝ կազմալուծվեցին և ցրվեցին»:

Այս առգերը, վոր գրի յեն առնված 1916 թվին, պետք է յելա-
կեա ծառայեն սպեցիֆիզմի պատմական-հասարական դերի բնո-
րոշման :

Սպեցիֆիզմը վորպես ամբողջություն չի յեղել յերբեք Հան-
խառն մարգսիզմի հայկական ոջախ»—ինչպես հայտարարել ե իր
վերջին դրագում Դ. Անանունը: Վորպես ամբողջություն այն յեղել
է, ազգային-ոպպորտյունիստական սոցիալ-դեմոկրատիայի հայ-
կական մի վարիանտը: Զտարյուն պրոլետարական կազմակերպու-
թյուն՝ հետևողական միասնական ծրագրով, տաքոփիկական խրի-
դիրների ժաղաքական մեկին բմբոնումով և վոր կարեորն ե՝ մաս-
սայական-հեղափոխական զործնական աշխատանքի միասնական
գեկալարությամբ՝ սպեցիֆիզմը չի յեղել յերբեք: Այս վեր և կոս-
կածից, և որպան համոզվելու համար բավական ե թեկուզ հարեանցի
աչքի անցկացնել 1906-1907 թ. թ. հրատարակված «Կյանք» կոմ
«Զայն» սպեցիֆիկայն «որդանների» դեկալարող, հեղափոխական
գծից գործի հոգվածները:

Բայց կառկածից դուրս ենաւ այն, վոր զարգացման սկզբնա-
կան շրջանում սպեցիֆիկների շարքերում յեղել են հեղափոխու-
թյանը և պրոլետարիատին հարազար վորպ տարբեր՝ մարքսիս-
տական ընդհանուր աշխարհայցքով և, ինչպես մի առքիվ արտա-
հայտվել ե ընկլ. Խանոյանը՝ «բայլշիկյան թեկումով» (տես «Հայ-
արտուն», 1925, № 1, էջ 11): «Պրոլետարական, մարգսիստական,
«բայլշիկյան թեքումով» այդ տարրերին նկատի ուներ նաև ընկլ.
Ստ. Շահումյանը, յերբ 1906 թ. Միացուցիչ համազումարից հետո,
կշտամբելով Ս. Դ. Բ. Հ. կազմակերպությանը՝ համազումարի
վորոշումներին յենթարկվել չկամենալու հանգամանքը, դրում եր
այդ կազմակերպության զեկավարների մասին.

«Փոխանակ պարզ ու անկեղծ ներկայացնելու իրանց
բանվորներին այն, ինչ վոր կատարվել ե համազումարում,
փոխանակ պարզելու, վոր մեր տարրիների վենը արդեն
վիճակած ե և վճռված ե այդպես գլխավորապես այն լատիշ-
ների ու լեհացիների ջանքերի չնորհիվ, վորոնց անունով ի-
րանք միշտ յերդվում երին մինչև այժմ, նրանք սկսում են
խծրանքներով զրագվել, բատերիքական աղաղակներ բարձ-
րացնել, հայհոյանքներ թափել, աղաղաղել ճշմարտությու-
նը... Այդ բալորով ընկերներ, դուք կարող եք ժամանակա-
վորապես չփոթեցնել, մոլորիցնել ձեր ընթերցողներին,
բայց զրանից, հավատացնում ենք ձեզ, չի շահվի յերբեք հայ-
ողունատարիստը, վորի անունից գուք խստում եք, վորի
«միակ ներկայացուցիչը» գուք կամենում եք լինել: (Ստ.
Շահումյան, Մոսկվա, 1926, I, էջ. 136-137):

Անշուշտ, կազմակերպչական սիստեմի շուրջը յեղած «տարինե-

րի վեճը սոցիալ-դեմոկրատական Ռուսաստանի և հայ կազմակերպությունների միջև սաղմնային վիճակում պարունակում ելին իրանց մեջ պրոլետարական ինտերնացիոնալիզմի և բուրժուական նացիոնալիզմի միջև յեղած այն տարածայնությունները, վորոնք հետագայում վիճ ստեղծեցին այլ կազմակերպությունների միջև։ Պական խնդիրն ել այն և հենց, վոր սուհեցիփիզմի ներսում յեղած էլինսունակ տարրերին՝ քաղաքական աշխատանքն ընթացել և այդ տարածայնությունները հաղթահարելու գծով։ Յեզ յեթե մոտենաք սովորիփիզմի պրոբլեմին հենց նրա «կենսունակ տարրերի» հասարակական-քաղաքական ելույթցիայի տեսակիտից՝ այն կներկայանա մեզ վորովես մի կամուրջ՝ բուրժուական-դաշնակցական նացիոնալիզմից դեպի պրոլետարական-բայլչելկական ինտերնացիոնալիզմը։

1905 թվի հեղափոխության նախորեյին հայ նացիոնալիզմի համբաներում խրված մտավորականության և բանվորության վորուչ «հենասունակ տարրերը»՝ պրոլետարական-հեղափոխական տուածաղկան դիրքերն անցնելու համար—խոսենք ընկերության հասկանալի լիդումի—կարիք ունեյին քաղաքական քավարանի, վորտեղ պիտի սրբվեր նրանց նախաձին մեղքը։ Քավության միջոցն այն պայքարն եր, վոր քարեցին արդ «կենսունակ տարրերը» իրենց «ծընող մոր»—պանարմենիստական Դաշնակցության գեմ։ Նույն այդ տարրերի նեղման տակ Ս. Դ. Բ. Զ. Կ. 1907 թ. ընդառաջնելով Բ. Ա. Դ. Բ. Հ. կենսակոմի հրավերին՝ քայլեր արեց Ռուսաստանի կուսակցության հետ միանալու ուղղությամբ։ Այդ քայլերն արվում ելին—հակառակ Ե. Սուրենի պնդումներին—շեղում կատարելով Բունդի առաջարած զծից ու չնայած Բունդի տրատունջներին։ Ահա թե ինչ և ասում այդ մասին ընկերությունից այս հարցում միանդամայն կոմպետենտ վկայությունը։

«Ս. Դ. Բ. Զայ կազմակերպությունը բաժանում եր թ. Ս. Դ. Բ. կազմակերպությունից նույն բանը, ինչ իր ժամանակին բաժանում եր և շարունակում ե բաժանել Բունդին։ Դա ազգային և ֆեներալիստական կազմակերպչական սկզբունքներն են... Գիտնալով համագումարի աննպաստ տրամադրության մասին՝ կազմակերպչական այդ հոչակագոր պրինցիպների վերաբերմամբ—հայ ընկերներն իրանք շուապեցին անել մի շարք կոմպրոմիսային բնույթ կրուղ զիջումներ, վորոնք կարող եյին քիչ չատ ընդունելի լինել համագումարի կողմից։ Բայլչելիների, մենշևիկների և լեռնացիալ-գեմոկրատական բանդանուր ջանքերով՝ հանձնաժո-

դովը վորուշ բան արեց, վորպեսզի նախագծից դուրս հանվի նրա Փեղերալիստական խայթը : Բայց պետք ե խոսում վանել—և կոմիսիայի զեկուցողը, բացահայտ արեց այդ համագումարում—վոր այդ հաջողվեց անել չառ անհան չափով : Ճիշտ ե, մենք մեր ուղղումներով հասանք նրան, վոր Բունդի պաշտոնական ներկայացուցիչը հարկ համարեց բայց չելի զեկուցողից հետո հայտնելու համագումարի ամբիոնից, վոր ուղղված նախագիծը Բունդը նույնպես կոմպրոմիսային և համարում, բայց միայն կոմպրոմիսային ուրիշ ուղղությամբ, այսինքն՝ զուտ Փեղերալիզմի տեսակետից՝ «վանթարացման» իմաստով : Այնուամենայնիվ փաստը մնում է փաստ . . . Միությունը հայ սոցիալ-զեմոկրատիայի հետ կորելի յերեթե կատարված համարել . . . Մենք յեղբայրաբար վողջունում ենք մեր կուսակցության շարքերը մտնող հայ և գ. ջոկատը, բայց, միենույն ժամանակի, անպայման անհրաժեշտ ենք համարում հերթական վճռական զաղափարական պայքար մենք Փեղերալիզմի դեմ մեր կուսակցության մէջ» (Դ. Ցինօվեև, Սովորենիա, I, 87):

Վերահաս ուեկալցիան խոչընդուռ յեղավ կազմակերպչական միությունը գլուխ բերելու չանքերին : 1908—09 թվականներից սպեցիֆիկների մեջ ուժեղանում ե բացահայտ ուղղություններատեսական-նացիոնալիստական խմբակի զեկավարությունը : Այս խմբակի համար «մարքսիզմն» ու «սոցիալիզմը» միայն ձեւական, յերթեմն անհրաժեշտ նկատված, մի տուրք եր՝ համառուտական հեղափոխությանը : Եեվ յեթե մոտենանք սպեցիֆիզմին հենց նացիոնալիստական-պայպորտյունիստական այդ խմբակի հասարակական-քաղաքական հետագա եվլոյուցիայի տեսակետից, այն կներկայանա մեղ վորպես մի կամուրջ՝ Դաշնակցության «սոցիալիստական» ֆրուգուզիայից դեպի լիկվիդատորաւթյուն, հայկական սխնիզմ, մերկապարանոց շովինիզմ և սամձարձակ հակահեղափոխություն :

Բուրժուական-նացիոնալիստական հակահեղափոխության ուղղությամբ նավարկող այս տարրերի զեկավարության ըրջանում 1905—07 թվականների սպեցիֆիզմը վարպես ամբողջություն կազմականածվել եր փաստորեն : Այդ ենցում հենց ընկ. Ստ. Շահումյանի այն հասվածը, վոր բերեցինք վերե Այն, ինչ մնաց հրապարակում Ս. Դ. Յ. Զ. Կ. անունով ե ուղագործեց սնանկացած այդ Փիրման հասարակական-քաղաքական աշխատանքի համար՝ վերասերվել եր փաստորեն վորպես նացիոնալիզմի ավելի հետաղեմ, ավելի հակահեղափոխական . մի վարիանտը, քան եր ինքը «մայր կուսակցությունը»՝ Դաշնակցությունը :

«Սոցիալ-զեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը կոչվածդղագրել ենք մենք 1918 թվին մեր մի հոգվածում—իրապես միայն մշակական մարքսիստների քաղաքական ցուցանակն է, իսկ նրա հրատարակած «Բանվոր»ը՝ հայ նացիոնալ-լիբերալների «սոցիալիստական» ուղղիցիայի անդաշտու բերանը: «Բանվոր»-ի բերանով խոսում և զայեցիֆիկ հայկական «սոցիալիզմն» իր բոլոր գրական-և թիքական շեշտերով: «Բանվոր»-ի շուրջը խմբված կը զանեք և՝ սպանական սոցիալիստներ (Շմուլերն այդպիսիներին Salon-domage անունն եր ատլիս), և՝ քրիստոնեական սոցիալիստներ (այդպես են կոչվում այն «սոցիալիստները», վորոնց կարծիքով միջադարյան բանվորական շարժման «վեհությունը» նրա մեջն և գյուղավորապես, «վոր բոլոր տանջվածների, բոլոր հարստահարվածների, բոլոր արտասովողների միսիմարիչը Հիսուսն արդ շարժման հետ և» (անս «Գարոն», 3, յեր. 145) և՝ վիճիտառ սոցիալիստներ (այս անունն ունեն «Մշակօ-ում», «Փորձ»-ում և այլուր համախմբված այն «Հայրենարադ սոցիալիստներ», վորոնք «նյութական պատվանդան» ու «հոգեւոր անոթներ» են վնարում «հայության հավաքման» համար) և՝ վերջապես՝ քրեական սոցիալիստներ (հայ պարականոն սոցիալիզմի տարեգրության մեջ այսպիս են կոչվում այն «սոցիալիստները», վորոնք անուն են հանել հատկապես հայ պլադիստի բերք պնդաստանում):

Հայ ժողովրդի «խոնարհ խավերի» շահերի «սովասավորությանց համար չե հրատարակվում Բաղվի «Բանվոր»ը: Մշակական մարքսիստները զեղի դասակարգային կոփի չե, վոր առաջնորդում են այն պրոլետարիատին, վորոնց «միանալու» կոչ են անում իրենց նոր որդանի խորագրում: Հայոց սոցիալ-զեմոկրատաները «մարքսիստների» այն սավարանակին են պատկանում, վորոնք հորդորում են բանվորներին միանալ բուրժուազիայի հետ (единство с буржуазией) «Հայրենիքի թշնամիների» զեմ կոմիտու համար, «Համաձայնինու» բուրժուազիայի հետ՝ սոցիալիզմից պաշտպանվելու նպատակով (обороны от социализма): «Բանվոր»-ի գոյությունն ամբողջապես իմաստավորվում և բանվորագյուղական խորհուրդների իշխանության և նրա զեկավար կուսակցության՝ հեղափոխական սոցիալ-զեմոկրատիայի զեմ վարած կովով: «Բանվոր» թերթի քաղաքական որիենտացիան նույն է, ինչ վոր ունեն բուրժուազիան և իր սոցիալ-պատրիոտական համհարզները («Բանվորի Խոռը», 1918, № 5, էջ 9):

1905—07 թվականներին սպեցիֆիկների շարքերում զեղերական ակտուական տարրերը, բանվոր թե ինտելիգենտ, սպեցիֆիկմի

բուրժուական—նացիոնալիստական վերասերման հետին շրջանում՝
արդեն իսկ լքել ելին իլն կազմակերպությունը և անցել վորպես
բայլչեկիներ Ռ. Ս. Դ. Բ. Կ. շարքերը։ Դրանցից միայն վոմանք,
մի առ ժամանակ զեղերելով իլն գիրքերի վրա՝ քիչ թե շատ հետու-
ղական պայքար ելին տանում կազմակերպության նացիոնալիստա-
կան ղեկավարության ղեմ։ Փաստ և սակայն, վոր խմակերիալիստա-
կան պատկերազմի նախորեյին սպեցիֆիկների շարքում ղեղերող
այդ տարրերն իսկ խզեցին իրանց կապերը կազմակերպության հետ։
Դրանց մեծ մասն ևս հետազայում դարձյալ մեր կուսակցության
մեջ մտավ։

Յելակեա ընդունելով ընկ. Ստ. Շահումյանի՝ սպեցիֆիզմի
մասին տված ձեւակերպությունն, այսպես և պատկերանում մեղ նրա
զարգացման դիակետիկան, նրա սկիզբն ու վախճանը, նրա հասա-
րակական-քաղաքական ընդհանուր ընթացքը։

Այլ պատկերացում ունի սպեցիֆիզմի մասին ընկ. Ե. Սուրենը։
«Զի յեղել հայկական,—դրում ե նա,—ել չենք ասում
անդրկովկասյան—ոռուսական—միջազգային իրականության
մեջ մի փոքր ի շատե աչքի ընկնող հասարակական, քաղա-
քական, անդամ դրական խնդիր, վոր սպեցիֆիզմը միշտ
Դրանակցության հետ յեղած չիներ և ընդդեմ մեր կոմմու-
նիստական կուսակցության» («Մարտակոչ», № 28)։

Յել իր ասածը հաստատած լինելու համար՝ թվում և դաշնակ-
սպեցիֆիզմի և բայլչեկիզմի միջև տարածայնություն առաջացնող
հարցերը։ Ազգային խնդիրը, դաշնակցական կուսակցության գա-
սակարգային բնույթի հարցը, հայ-թրքական ջարգերը 1905—1906
թվերին, տաճկա-հայկական հարցը և այլն, և այլն։

Սա, ի հարկե, անհեթեթության հասնող չափազանցություն
և, վոր վանում ե իրենից տեղի և ժամանակի ամեն մի տարիքում։

Յեղել ե ժամանակ և յեղել են սպեցիֆիկներ, վոր պայքարել են
պզզային խնդրի դաշնակցական-ոպանարմենիստական ընբոնման
դեմ։

Յեղել ե ժամանակ և յեղել են սպեցիֆիկներ, վոր շեշտել են
Դրանակցության դասակարգային-նացիոնալիստական բնույթը և
մերժել են նրա «Հին ճշմարտությունը»։

Յեղել ե ժամանակ և յեղել են սպեցիֆիկներ, վոր մերկացրել
են տաճկահայ շարժման ռոմանտիկ-նացիոնալիստական պարու-
նակությունը և կովել նրա լուծման հայդուկային խմակերիալիստա-
կան մեթոդների դեմ։

Դաշնակցության հետ անհամաձայնության կետեր յեղել են նաև Հայ-թրքական ջարդերի և ուրիշ չառ խնդիրներում—անդրկովկասյան, ուռուական, միջազգային և այլն :

Յեվ չափազանցություն, անհեթեթություն չե՞ , իրոք, պնդել, թե բոլոր այդ հարցերում սպեցիֆիզմը յեղել է միշտ Դաշնակցության հետ և կոմունիստական կուսակցության դեմ :

1906 թվին սպեցիֆիկներն առարկում եյին մեր կուսակցության «ազգերի ինքնորոշման» լրացնդի դեմ՝ հայտարարելով, վոր յեթե այն նշանակում ե անշատումն Ռուսաստանից՝ ապա իրանք հրաժարվում են արդ իրավունքից : Անհեթեթ առարկություն եր առ, քանի վոր անջատումից իրաժարվելի խսկ ինքնորոշման հանդամանք առնի : Բայց նույնքան ահեթեթ առարկություն չե՞ր լինի համաձայնել և . Սուրենի այն մտքի հետ, թե սպեցիֆիկների այդ առարկությունն իսկ մասնում եր դաշնակցական մտայնություն : Տրամաբանության որենքները պարտավորիչ են՝ անզամ «Յերկու տեսլունց»-ի հեղինակի համար : Բոլոր այս գեղքերում սպեցիֆիզմի շարքերում գեղերող «կենսունակ տարրերը» մոտենում եյին խնդիրների լուծմանը՝ պայքարի բոնվելով հենց Դաշնակցության հետ :

Մակայն նույն այս հարցերին արամարանորեն հակառակ պատասխան եյին տալիս սպեցիֆիզմի ոպպորտյունիստական-նացիոնալիստական տարրերը, վորչափ նրանք ձեւակերպում եյին և լուծում խնդիրները՝ կովկ բոնվելով հեղափոխական մարքսիզմի՝ բայց լիդմի հետ : Բոլոր այս գեղքերում սպեցիֆիզմի ոպպորտյունիստ, հետագայում բացահայտ նացիոնալիստ ու հականեղափոխական գեկավարները հրաժարվում եյին խնդիրների մերձեցման իման ուղիներից ու հանդում նոր յեղբակացությունների : Յեղբակացությունները, վոր համապատասխանում են հիմնականում բայց լիզմի և պրոլետարիատի գեմ պայքարող հայ աղքայնական մյուս կուսակցությունների գերքերին :

Հիշենք թեկուղ գաշնակցական փրկիչների գեպի Թավրիզ շլոզ կորավանից քարշ ընկած Բ. Իշխանյանի քաղաքական ելույթին : Նրա «մարքսիստական» տեսակետն այն մասին, թե Թյուրքիան անընդունակ է հեղափոխական վերածնության : Նրա թեսորիան այն մասին, վոր թյուրքիայ խնդրի լուծումը հնարավոր է միայն Թյուրքիան՝ իմակերիալիստական Յեվրոպայի կողմից անտեսապես նվաճվելու միջոցով : (Տես Բ. Իշխանյան, «Թյուր-

քիայի ապագան» , Թիֆլիս , 1907թ.) : Նրա Պետերբուրգի դասախոսությունները՝ տաճկահայ վիլայեթներն աննեքսիայի յենթարկելու մասին և այլն :

Կամ հիշենք Դ . Անանունի հասարակական-քաղաքական և լուսացիան : Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի թեորիայից՝ դեպի գաղնակցական պետականության «հարազատության» թեուրիան : «Հայության հավաքման» գաղափարախոսությունից դեպի «համազգայի ներքին ֆրոնտի» կազմակերպում՝ դաշնակցականների զեկավարությամբ : Հայ-թրքական ջարդերի քրարոյական և «պրոզրեսսիվ» արդյունքների մասին արած խորհրդածություններից դեպի խաչակրաց արշավանք՝ ընդդեմ «ակյութական» տարերքի (իմա՝ Հոկտեմբերյան հեղափոխության) արտաքին գրոհի և «ներքին թուրքի» (իմա՝ «հարազատ» պետականության հիմքերը փորող բայլշեիզմի աճող տարերքի) :

«Հայը լրիվ մարդ դարձած չի լինի , յեթե նա չհրաժարվի «ներքին թուրքից» , յեթե նա վերջ չտա իր հոգին ներքինանցնող ոտար ազգեցություններին , իսկ դա հնարավոր է , յեթե նա մկրտվի հայրենի պետականության վիճ և ավազանում» («Հայաստանի կոռպեհրացիա» , 1920 , № 19 , էջ 807) :

Մի այլ տեղ Դ . Անանունը գրում եր —

«Մենք կը ստեղծենք ժողովրդական ազատ պետություն . վորը կը քառնա ապահով հանդրվան աստանդական հայության համար , շնորհելով նրան և՛ կյանք , և՛ արել : Խորթության ու շահագործության յերեսոյթները կը բաղխեն մեր դուռը , բայց կը վտարվին մեր հայրենիքի սահմաններից . վորովհետեւ հարազատության կուռ կապն և կանգնած մեր գուան՝ իրեն անվկանդ պահակ ու ուղմական ույժ» («Բանակի որ» , 1919թ . դեկտ . 21 , Անանունի «Հարազատություն» հոդվածը) :

Սա արդեն բացահայտ ռեակցիոն , բուրժուական բարբառ եր , վոր բանեցնում եր վերասերման իր պրոցեսը բոլորած սպեցիֆիզմը : Պահ մի դեպեհելով մտայնության այս նախահանգստում՝ սպեցիֆիզմի «թափառ հոգուց» վերանում եր վոչ միայն «սոցիալիստական» դաղափարախոսությունն , այլև՝ նրա Փրազիմովդիան :

Յեվ , ըստ եյության , ռեակցիոն ու բուրժուական նույն այս մտայնությունը չե՞ , վոր նույն Դ . Անանունի վերջին հատորում իր վրա յե առնում այսոր «ազգաշինության» առաքինի քլամիտը :

Էնկ . Ե . Սուրենը տարբերություն չի գնում յերեկի և այսարի

միջեւ : Նա նման է տուածի այն խղիթին, վորի խոռքը մեկ եւ՝ «միշտ և ամենուրեւ» : «Բախչիականության և ոուրենիդմիւ մեջ նրա համար չկա տարրերություն «մազաշափ անգամ» («Մարտակոչ», № 33) : Յեվ այն հարցին թե՛ ի՞նչ և սպեցիֆիկմբ—նա՝ թագցնելով Ստեառումյանի պատասխանը՝ տալիս ե նոր, համապարփակ, մի պատասխան՝

«Դաշնակցության սոցիալիստական վարիանտ կամ սոցիալիզմի դաշնակցական վարիանտ» (ն. ա. № 28) :

Մարքսիստական-դիալետիկական քննադատության՝ այս Փորձությունը չի գիտանում :

Այդ Փորձության անդիտանում և գարգացման «յերկու ահնդենց»՝ սպեցիֆիկմի ներուում : Զի կարողանում տարրերել իրարից հեղափոխության ու Հակահեղափոխությունը սպեցիֆիկմի ներուում : Յեվ միաժամանակ անզոր և սահմանագիծ քաշել հեհափոխության և Հակահեղափոխության միջև սպեցիֆիկմի դրասը :

Հիբասիքի : Յեթե մոտենանք դրան սպեցիֆիկմի մեջ յեղած «կենսունակ տարերի» կատարած քաղաքական եվլյուցիայի տեսակետից՝ այս Փորձությունը գերազնահատում և ազգային կողմանկերպչական հին հեղեկի բացասական պարունակությունը :

Յեվ ընդհանուրակը :

Յեթե մոտենանք դրան սպեցիֆիկմի մեջ յեղած սպառայունական-նացիոնալիստական տարրերի կատարած եվլյուցիայի տեսակետից՝ Ե. Սուրենի Փորձությունը թերագնահատում և ազգային կողմանկերպչական հին ձեռքի մեջ հետզետե ծավալված բացասական բավանդակությունը : Ինքը՝ բնկ. Ե. Սուրենն ե դրում այն մասին, թե՝

«Սուրենի Փորձը յեղել և միշտ և ամենուրեք Դաշնակցության յերրեմն «Ճախ» թեր, վոր կարծես միայն նախազդացի և 1905 թ. Դաշնակցության հայոնի «Կովկասյան նախազիծը», իսկ ավելի հաճախ նրա աջ թեր, վոր ձեռակերպել և նրա շավինիստական իդեոլոգիան» (ն. ա. № 28) :

Զի՞ զգում հեղինակը, վոր այս միունք անհնար և տեղալորեց սպեցիֆիկմը բնորոշելու կոչված մողական իր Փորձությունի մեջ : Դաշնակցության աջ թեր չեր կարող լինել միաժամանակ նաև նրա «սուցիալիստական» վարիանտը, յերբ միաժամանակ այդպես ենք բնորոշում նրա «Ճախը» : Ե. Սուրենի «Ըստաբանությունը» այսուղ և կատարում է նրա մետաֆիզիքական մտածողության բացուր

ձակ հրահանդի ներքո : Յեվ նրա փորձը՝ ներկայացնել ուռւսահայերի հասարակական զարդացման «յերկու տեսնդենցը»՝ վորպես մի կողմից դաշնակ-սպեցիֆիստական հականեղափոխության և մյուս կողմից լենինյան-բայլչելիստական հեղափոխության հականեղափոխության մի պայքար, պետք և նկատել միայն վորպես զարդացման կոնկրետ ու իրական ընթացքը հեգնող, սիեմատիկ, հակադիալեքտիկական-հակամարքսիստական մի մտահղացում :

Վո՞րն և սակայն ընկ . Ե . Սուրենի այդ մտահղացման զաղափարական աղբյուրը : Ընչուշու ուրույն նրա ըմբռնումն՝ անցյալի ուսումնասիրության մարզսիստական մեթոդի մասին : Բայ ընկ . Ե . Սուրենի, անցյալի անդամ «վավերագրային» ուսումնասիրության «ուղղակի պարտականությունն և բայլչելիումի գովին անելը ,

«Հակադրել մեր կուսակցության պատմության մեծությունը մենչեւիզմի և մանավանդ մեջան սպեցիֆիզմի ամենքին ակնհայտ վոզորմէլիությանը» (տես՝ «Հայրապետն», Բագու, 1925 թ ., № 1, էջ 161) :

Մարքսիստական պատմագրության տեսնդենցիոդ-դիրակութիկական այս խեղաթյուրումը մերողական ըմբռնումների տեսակետից փոխադրում և մեր դեպի արքունական պատմագրության շրջանը : Լավագույն դեպքում այն հիշեցնում և լուսահոգի Կարամզինի դարը, յերբ պատմությունը համարվում եր մի տեսակ «ժողովուրդ-ների սրբազն գերք—զիմավորը, անհրաժեշտը, նրանց կենցաղի ու գործողությանց հայելին, հայանությունց և կանոնների տախտակ, նախնիքների պատգամ հետորդներին . ներկայիս լուսը և մեկնարանումը և՝ որինակ գալիքի համար» (Տես՝ Հ. Մ. Կարազին, „Իстория Государства, Российского, т. I стр. 13, А. А. Петровича, Москва 1903 г.);

Զուր չե, վոր անցյալի մեջ ընկերը ճանաչում և միայն հերոսներ ու դաճաներ, կիրառում մեծարող կամ նշավակող ածականներ միայն : Սքանչելի, անմման և անմահ անուններ-մի կողմից : Խայտառակ, ողիոզ և մեշչան անուններ՝ մյուս կողմից : Ահա պատմության պերսոնաժները, նրա ընթացքին ստարողները կամ այդ ընթացքը խանգարողները : Անհատներ ու ածականներ, վորոնց միջոցով ջանք և գործ դրվում աշխույժ հաղորդել հատուկ անունների՝ հեղինակի գրչի տակ խամբած ու գորչացած՝ պարունակությանը : Զկա հավաքականությունը—դասակարգը : Զկա տեղի ու ժամանակի պայմանականություն : Յեվ այս տեսափետից, հարկավ, անարդարացի կը լիներ անդամ կարամզիյան

անվանել պատմական այս մեթոդը։ Յերեռւյթների գնահատմանը ժողովում և այսուղ նախածին մեղքի կամ վախճանականն նակառազրի տեսակետից։ Այդ յերկու հակառիքը բեկեռների արանքում չկա հասարակական քաղաքական զարգացման վորոն որյեկտիվ պրոցես, այլ անհատներ միայն, նրանց հակումները, վեհթե սոսոր, աղնիվ թե խարդախ, անձնվեր թե դավադիր՝ այդ միենույն եւ։

Բարի ու չար, լուսավոր ու խավար ուժերի հավիտենական բազխում—ահա թե ինչ և ըստ եյության միջնադարյան դուալիզմի մեջ դաշտաբով այս պատմահայեցողությունը։

Սակայն պետք է գեռ ազելի հեռուն գնալ «մարքսիստական» այս մեթոդն ըմբանել կարենալու համար։ Լսեք, թե ինչ է դրում ի։ Սուրենը Հայաստանի Խստավարսի հետապնդելիք նպատակի մտնին։ Մինել՝

«Հեղափոխական մարքսիստական պատմագիտության ոջախ, վոր եին զուսանների նման յերգեր ու յերգեր անվերջ Սու Շահումյանի, Սուրեն Սպանդարյանի և լենինյան կուռակցության տասնյակ տարիների հերոսամարտը» («Մարտակոչ», № 32)։

«Հեղափոխության մարքսիստական պատմագիտության «աջախ» և միտմամանակ՝ «հին զուսանների յերգեր», վորպիսի շփոթ դաշտաբարներ ու հասկացողություններ, վորպիսի ծաղը իստավարսի կատարելիք աշխատանքների հասցեյին... Սա հաղարամյակներով ավելի դեռն և գնում կարամզինի դարաշընից։ Խոսելով զուսանական յերգերի հիման վրա հյուսված տարեդրական ասուրյունների մասին՝ վերջինս գրում եր գեթ՝ «Մտացածին բաներն ել են դուքս գալիս։ բայց լիակատար հաճույքի համար անհրաժեշտ և խորել ինքողինքն ու մտածել—թե նրանք նշմարտուրյուն են»։

IV

**ԳՐԱԿԱՆ ՌԵՑԻԴԻՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱԶՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԹԵՌԻՎԵՍԻ ԽՆԴՐՈՒՄ ԿԱՄ՝ «ՁԱԽ» ՊԱՆԻՎԵՌՈՒԹՅԱՆ
ՆՈՐ ՊՏՈՒՅՑԸ «ՎԵՐԱՍԵՐՄԱՆ» ԹԵՌԻՎԵՍԻ ՃԻ
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Սակայն ընկ. Ե. Սուրենի հայտնությունները վոչ միայն իրենց մերողական վորոշ ազբյուրն ունեն, այլև սկզբունքային—ժաղաքական վորոշ խմասոր։ Խմասոր, վոր սկիզբ առնելով դուսանական պատմահայեցողության նախապատմական ակտունքներից ձեւակերպում և միաժամանակ վերին աստիճանի այժմեական, արդիական մի մտայնություն։ Վորպես սկզբունք այդ մտայնությունը փորձում է նախ և առաջ գիրք բռնել մի հարցի վերաբերմամբ։ Դա պատմական հաջորդականության և գաղափարական ժառանգության հարցն է, վոր, անկախ ընկ. Ե. Սուրենի յելույթից, գարձել և վերջերս զրադեցնող մի խնդիր։

Ծնկերներից վոմանք ժամանակին մեզազրում եյին ընկ. Յուլիանին այն բանի համար, վոր «Հայ բանվորական ասոսցիացիայի» որգան «Ազատ Հայաստան» թերթի մասին «Նորք»-ում տպած իր մի հողվածի մեջ, նա չեր կամեցել ճանաչել պատմական վորեւ Հաջորդականություն այդ կիսապայացնական-կիսաբանվորական, կիսահնչալյան-կիսասոցիալիստական որգանի հետ։ Սակայն նույն այդ ընկերները տարակուսանքի մեջ են ընկնում, յերբ հարց և ծաղում պատմական հաջորդականություն ճանաչելու 1903-07թ. թ. թ. կիսապայացնական-կիսասոցիալիստական, կիսամենչնչելիկան-կիսաբայլը կիսական այնպիսի մի կազմակերպության հետ, վորպիսին եր Ս. Դ. Բ. Հ. Կ.։ Յերկու կշխուցիւրկու չափ։ Մինչդեռ թվում է՝ հարցը ոլարզ և միանդամայն և բացորոշ։ Յեզ նույնչափ պարզ պետք է լինի և բացորոշ նաև գրա պատասխանը։

Եեթև մոտենանք խնդրին հայ նացիսնալիստական իզեռլուկի աստիճանական ժայժայման և հայ բանվոր մասսաների գասակարգային ինքնաղիստականության աստիճանական կազմակերպման

տեսակիտից՝ պատմական հաջորդականության փաստն անհերքելի յէ, թէ մի և թէ մյուս գեղգում։ Խոշոր չափով այդ պետք ե խոստավոնել «Հայ բանվորական ասսոցիացիայի մասին», վոր ծնունդ առաջ 90-ական թվականներին, յերբ մեղանում բանվոր դասակարգը դեռ չեր հասունացած պատմական ուրույն շարժման համար։ Նվազ չափով նույնը պետք ե ասել նաև 1903-07 թ. թ. Ա. Բ. Հ. կազմակերպության մասին, յերբ մեղանում բանվոր դասակարգը գրերի արդեն հասունացած եր պատմական ուրույն շարժման համար, և հետեարար՝ նրա պաղային-կազմակերպչական մեկուսացումը՝ միջազգային-պրոլետարական շարժումից։ Մեծ չափով արգեն իսկ պետք ե նկատել վորպես ուսակցիոն յերեւոյք։

Ասկայն վորմե չափով ընդունել պատմական հաջորդականություն այս կամ այն կազմակերպության հետ՝ այդ չի նշանակում զաղափարական ժառանգություն ընդունել մեր և մեղ հետ պատմական հաջորդականությամբ դուզմած կազմակերպությունների կամ նրանց ղեկավարների ձեռքից։

Մեր շարքերն անցնող հին կազմակերպությունների ներկայացուցիչներն անցման իսկ ակտով իրաժարվում են անցյալի գաղափարական ժառանգությունից, վորչափ այն տարրերվում և պրոլետարիատի միակ հեղափոխական, միակ մարքուսական կուսակցությունից ու այլ կուսակցության իդեոլոգիայից։ Յեթե յեթե չկան հակառակն ապացուցող իրական փաստեր, յեթե տեղի չունի իրոք զաղափարական ուղղիքիվ պատմական անցյալում թաղված խնդիրների վերաբերմամբ՝ չի կարելի վերադառնալ շարունակ հին, վազուց վճռված այդ խնդիրներին և դարձնել նրանց ակտուալ, այժմեականություն պահպանող հարցեր։ Այդ կնշանակելը անթաղ մեռելի մեջ զնել հին վեճերը, նեխել քաղաքական պայքարի կենդանի մթնոլորտը։ Հրաժարվելով պատմական հաջորդականությամբ մեղ հետ կապված կազմակերպությունների այդ ժառանգությունից և դատապարտելով պրոլետարիատի կովկի բարձր աստիճանի վրա նրանց պրակտիկայի և իդեոլոգիայի բացասական դերն ամբողջությամբ՝ չենք կարող ստկայն անդիտունալ նաև այդ կազմակերպությունների կամ նրանց ղեկավարների ստամֆին դրական արժանքները, վորչափ սրանք վրահորվել են իրոք հեղափոխության ընթացքում և այս կամ այն չափով իրոք ամանդակել հեղափոխության դործին։ Սա ճշմարիտ և նույնչափ։

վորչափ ճշմարիտ ե , ընդհակառակը , նաև այն , վոր մեր կուսակցության՝ վորպես ամբողջության պրակտիկայի և իդեոլոգիայի ճշտությունը բնավ յերաշխիք չե նրա առանձին սխալների կամ նրա զեկավարների առանձին սայթաքումների դեմ : Միայներ և սայթաքումներ , վոր գրսեւորում են յերբեմն հեղափոխության ընթացքում և այս կամ այն չափով վնասում նրա պրոդրեսիվ ընթացքին :

Ընկեր Ե . Սուրենի և նրա գուսանական պատմահայեցողության տեսակետից բոլոր այս գիտողությունները անհասանելի ճշմարտություններ են , ի հարկե : Կուսակցության կամ նրա զեկավարների առանձին սխալներն ու սայթաքումները—յեթե այդպիսիք ներկա գեղեցում յեղել են առհասարակ—նա որամադիր և Հայտարարել գծի ընդհանուր աղմատում , կուսակցության՝ վորպես ամբողջության վերասերում :

Մտքի ընդհանուր քեֆում ե սա , վորը՝ վորպես ուցցիդիվ՝ պարբերաբար կրկնվում է ընկ . Ե . Սուրենի գրական յելույթների մեջ և բնորոշում այդ յելույթները վորպես՝ «ձախ» պանիկյորության հայկական մի վարիանտ :

1921 թվին բնորոշելով Խորհրդային Հայաստանի նախավետրվարյան՝ «կայոյանական» ժամանակամիջոցը—ընկ . Ե . Սուրենն այն ժամանակ ևս անհատների հետ եր կազում պատմական ըրջանները—ընկ . Ե . Սուրենը գրում եր՝

«Ճիշտն ասած մեր ընկերներին չի հաջողվել Հայաստանում մշակել ու վարել առողջ վարքագիծ , վոր յես սիրով անվանում եմ խորհրդային գիծ» («Կարմիր Աստղ» , 1921 , № 51) .

«Նույնիսկ մեր կուսակցության կենտրոնը չեր կարողանում իրան պարզ պատկերացնել իր անելիքը և հետեւ այն գծին , վոր մենք սովոր ենք անվանել խորհրդային գիծ» (Ն . ա . № 187) :

Նույն և գեռ ավելի մուայլ ներկերով ե պատկերանում Ե . Սուրենին Խորհրդային Հայաստանի քաղաքական զեկավարության հարցը 1921 թվի վետրվարյան ավանդութայից հետո :

Կա՞ արդյոք Հայաստանում խորհրդային իշխանություն . Ընկ . Ե . Սուրենը տալիս եր բացասական պատասխան նույնիսկ այդ հարցին՝

«Խորհրդային իշխանությունը Հայաստանում այսոր՝ անմասս , հանդիսանում ե , ինչպես ընդունված ե առել

բանվորական չըշաններում՝ պարադի որերին մեր շարքերն ուղղակի կոմիսարներ անցած յերեկվա հակահեղափոխության և վատագույն տեսակի սոցիալ-համաձայնականության վառ դեմքերն ու դադախարախոսները» : (ն. ա. № 187) :

Իսկ բնօրոշելով Հայաստանի Սովորակոմը, նա դրում եր՝ «Ակամա հարց ե ծաղում... կոալիցիոն նախարարություն չէ՝ այնտեղ կամ մենշևիկական դավադրություն» :

Մակույն Հայաստանում վոչ միայն խորհրդային իշխանություն չկար, այլև՝ կոմմունիստական կուսակցությունները դրամական պատճեն դրում եր այդ առթիվ՝

«Ուժերի գասավորությունը կուսակցության ներսում կատարվեց այնպես, վոր ստեղծվեց մի գրություն, յերբ իրավապես կարծես հին բայլչելիկ ընկերներն են հանդիսանում կուսակցության միջուկը, բայց փաստորեն թիֆլոսի խայտառակ Ազգային Խորհրդի շկուրան հիմնավորապես անցած մենշևիկական՝ նորերս կոմմունիստ մկրտված ֆրակցիան» (ն. ա. № 141) :

«Մեր ցանկությունն ե ունենալ Հայաստանում կոմմունիստական կուսակցություն իր հատուկ դեմքով և յերկու վոտքով պինդ կանգնած խորհրդային հողի վրա՝ բուժված տեսնել նրան այն դժուությունից, և յեթե կուղեք՝ համաձայնականությունից, վոր նրան սրսկել են բոլշևիկացած մենշևիկները, վոր վոչինչ լավ բան չեն սուլում մեղ» (ն. ա. № 187) :

Այսպես եր դրում ընկ. Ե. Սուրենն իր այն հոգվածում, վոր կրում եր «Մենշևիկացած բոլշևիզմ, թե՞ բոլշևիկացած մենշևիզմ» բնորոշ վերնադիքը :

Յեկ դրեխով այդ հոգվածները՝ ընկ. Ե. Սուրենը կոչ եր ուղղում—այտեղ մենք թեակոխում ենք արդեն հերոսակաշտ պատմահայեցողության բաղաբական պրակտիկայի շրջանը—կոչ եր ուղղում Ալ. Մյասնիկյանին և Ս. Լուկաշինին՝ փրկել գըրությունը, մշակել Հայաստանի համար «խորհրդային վարչակիծ» , ստեղծել կոմունիստական կուսակցություն՝ «յերկու վոտքով պինդ կանգնած խորհրդային հողի վրա» (sic!) : Ե. Սուրենն առաջարկում եր «խորհրդային շինարարության մեջ մարզված» ընկ. Ալ. Մյասնիկյանին և Ս. Մրապիտնյանին (Լուկաշինին) յերկրում աշխատած կուսակցական հին ընկերների ողնությամբ քառաջին հերթին ստեղծել կոմմունիստական այն հագափոխական կուսակցությունը, վորի վրա հենվելով (sic!) —այս-

պես և պատկերացնում ընկ. Ե. Սուրենը կաւակցության և պետարքյան Հարաբերությունն ըստ յերեռոյթին—միայն հնարավոր և խորհրդային շինարարությունն ամեն մի յերկրում» (Ն. ա. № 187)։ Իսկ մինչ այդ՝ ընկ. Ե. Սուրենը շտապում եր վերցնել գուսանական իր սազը և փրկարար հերոսների «գովքն անել»։

«Ինչպես ընկ. Մյասնիկյանը, նույնպես և ընկ. Ա. Սրբովոյանը խոշոր ու պատրաստի ուժեր են, համառուսական մեծություններ, և նույնիսկ Խորհրդային Ռուսաստանի իրականության մեջ, վոր այնքան հարուստ և տաղանդավոր գործիքներով՝ առաջնակարգ և աչքի ընկնող գեմքեր։ Այս ցույց ե տալիս, վոր Խորհրդային Հայաստանի մեր կուսակցության կենարոնի ամենալուրջ և մոտ զրադաւնքի առարկա յե, յերբ Մոսկվայի և Ռուսասովից չըջանի աշխատանքից պոկլում են և ուղարկվում Յերեան (վոր Վերջ ի վերջո մի խուլ ու հետամնաց, քարուքանդ յեղած անկյուն և վոչ միայն համառուսական, այլև անդրկողկառայան մասշտարով)՝ այնպիսի առաջնակարգ ու անփոխարինելի, զժվարությամբ փոխարինելի ույժեր, վորպիսին են ընկ. Մյասնիկյան-Մարտունին և ընկ. Սրբակիոնյան-Լուկաշինը։ Այդ ցույց ե տալիս նույնպես, վոր Խորհրդային Հայաստանի իշխանության զեկը այսուհետեւ լինելու յի միանդամայն պատրաստ ու կարող ուժերի ձեռքին, վոր Հայաստանի կոմմունիստական կուսակցությունը հաստատ առաջնորդներ և ունենալու» (Ն. ա. № 51)։

Ընկ. Ե. Սուրենի այս հոդվածները ժամանակին արժանացան ընկ. Ա. Կառյանի սուր քննադատության։ Ընկեր Կառյանը ընտրուշեց ընկ. Ե. Սուրենի մաքերը վորպես «թշնամական թորվածքներ», վոր համացվում են հեղինակի կողմից կուսակցության՝ «թանձր քողով ծածկելով իր անկուսականության հատկանիւթը»։ «Դազգուում եր ընկ. Կառյանը «Մենչեմիկյան բոլշևիզմ», թե բոլշևիկուցած մենչեմիլիմ» հոդվածի մասին—բացարձակ վատարանում և, վարերենկումը կուսակցության, վոր հատուկ եւ միայն մեր թշնամիներին»։ Ընկ. Կառյանը շեշտում եր այն հանգամանքը, վոր ըստ հոդվածագրի՝ Հայաստանում վոչ թե մենչեմիկներն են բոլշևիկներ գարձել, այլ, լնդիակառակը, բոլշևիկները՝ մենչեմիկ։ Ընկ. Ե. Սուրենն առաջարկում եր զաել մենչեմիկացած այդ բոլշևիզմը «ցախավելով ու լախտով»—այսինքն կուսակցության մեջ մտած յուրաքանչյուր Հարյուր մենչեմիկից թողնել միայն յերկուուր։ Ընկ. Ա. Կառյանն այդ առթիվ յեղբակացնում եր՝ «Եշանակում ե, յեթի մեր կուսակցությունը, վոր մեն-

շերիկացած ե , բազկացած լինի , որինակի համար , 10,000 անգեմներից՝ պետք է դարձնել նրան 200 անդամանոց կուսակցություն :

Այսպիսով , չարունակում ե ընկ . Կառյանը , հեղինակը՝

«իրապես ցանկանում ե քայքայել , սպանել , վոչչացնել կոմմունիստական կուսակցությունը Հայաստանում : Այսպիսի նպատակ ու ցանկություն կարող է ունենալ միմիայն Դաշնակցությունը , մեր յերգվյալ թշնամին» (տես «Կարմիր Աստղ» , 1921 , № 214 , Կառյանի՝ «Թշնամին բարեկամի գղեստով» վերնագիրը կրող հոդվածը) :

Մակայն մի կողմ թողնենք Կառյանի այս հոդվածը , վորի ընթերցումն այսոր իսկ վերին աստիճանի շահեկան և շատ կողմերից—և չարունակենք «գուսանական» պատմության ընդհատված թելը :

Ընկ . Ե . Սուրենի հույսերը չարդարացան նաև նրա մեծարած զեկավարների ժամանակ : Արդեն իսկ «Կարմիր Աստղի» 1921 թ . № 187-ում լույս տեսած նրա հոդվածում կան դալիք հուսախարության նշանները :

«Կուսակցական շինարարության վրա—դրում եր նա—թե առաջին՝ կասյանական շրջանում և թե այսոք հարկավոր չափով չենք ծանրացել Հայաստանում և չենք կարողացել մեր կուսակցության մասսաների առաջ գործով ցույց տալ , թե ինչ ենք հասկանում խորիդային գիծ խոսքերի տակ , և ինչ պիսի ուղղությամբ պիտի քայլենք մենք , վոր մեր գործունեյությունը չը նմանի ավանդության դաշնակցականի , վարկարեկված մենչև ինի , վողորմելի ևս-երի սեանկ վարքագծին» :

Հետագա 1922-25 թ . թ . ընթացքում Ե . Սուրենի հուսախարությունը՝ մեծարած զեկավարների և նրանց հետ աշխատող ընկերների վերաբերմամբ , գտավ ավելի չոշափելի արտահայտություն 1923 թվի «Մարտակոչիք»-ի № 160-ում լույս տեսած «Ֆիզուրա ողիոզա» և 1925 թ . Բազմութ ապագրված «Հայարտան» հոդվածներում : Գրական լիակատար անփոփում գտավ այդ հուսախարությունը «Յերկու տեսնդենց» վերնագրով լույս տեսած այն հոդվածաշարի մեջ , վորի քննությամբ դրազված ենք հիմա :

Հին և նոր հուսախարության մեջ կա միայն «տենդենցի» այն տարբերությունը , վոր 1921 թ . ընկ . Ե . Սուրենը տեսնում եր միայն դաշնակի , մենշևիկի և ես-երի վտանգը , մինչդեռ հիմա՝ նրա աչքին «միշտ և ամենուրեկը» սպեցիֆիկ «Փիզուրաներ» են յերկում :

Համապատասխան կերպով մեր գուսանը ձեռնարկում ե նաև պատմական հաջորդականության և գողափարական ժառանգու-

թյան քեռրիայի վերաբննության :

Յերեկ ընկ . Ե . Սուրենը փորփորում եր անցյալը և նշանակության սյունին դամում Թիֆլիսի Ազգային Խորհրդի մենչեւիկ այն զեկավարներին , վորոնք հրաժարվել ելին մենչեւից և յեռանդում ու անձնվեր աշխատանք ելին տանում Խորհրդային Հայութանում :

Այսոր նա մեծարում ե «քայլչեիկացած մենչեւիկներից յերեմ - նի զեկավարին , Արշ . Զուրաբյանին և փոխադրում նրա աձյունները բայլչեիկյան հին գվարդիայի պանթեոնը :

«Մարքսիզմը մեզ համար բայլչեիկմը և և բայլչեիզմը մարքսիզմ - գրում ե ընկ . Ե . Սուրենը : Մենք չենք թույլ տա իրար հակադրելու այդ հասկացողությունները » : («Մարտակոչ» , № 33) :

Սակայն՝ ընկ . Ե . Սուրենի դյուրաշարժ գրչի տակ այսոր Արշ . Զուրաբյանը վոչ միայն «առաջին» և «իսկական» մարքսիստ ե դառնում , այլև հոչակիվում ե «հեղինակավոր» , «իսկական» բայլչեիկ՝ «հայ անցած գնացած կոմմունիստ ընկեր» : Ս . Շահումյանի , Ս . Սպանդարյանի , Բ . Կնույյանի և Ա . Զուրաբյանի անունները նա արտասանում ե այսոր մի չնչով (տես՝ Ե . Սուրենի «Հայարտան» մեջ լույս տեսած հոդվածը և «Մարտկոչ»-ի այսուղ քննկույթ համարները) :

Մենք զնահատում ենք Բ . Կնույյանի Ռուսաստանի և մասնավորեն հայ պրոլետարիատին մատուցած ծառայությունները՝ 1905 թ . Հեղափոխության նախորեյին և այդ հեղափոխության ժամանակ : Բայց չենք չենք կարող թագցնել նաև այն , վոր ունակցիայի տարիներին , Բ . Կնույյանն առաջիններից մեկն եր , վոր նազեց գեղի լիկվիդատորության ծանծաղուտը :

Դեսի Արշ . Զուրաբյանը ևս մենք ունենք հարգանքի զգացում , վորպես , մասնավորապես մի մարդու , վորին վիճակիված եր գրական վորոշ դեր կատարելու , հայ պրոլետարիատի դաստիարակային ինքնազմակցության արշալույսին :

Բայց չենք կարող անդիտանել և այն , վոր Ս . Շահումյանի և Ս . Սպանդարյանի կողքին Զուրաբյանը հրապարակ ե յեկել միշտ վորպես մենչեւիկ հակասակորդ : Հոկտեմբերյան հեղափոխության նախորեյին նա ստորագրեց մենչեւիկ-սպեցիֆիկյան հավաքական այն դեկլարացիան , վոր խմբագրվել եր Թիֆլիսի «Հայ սոցիալ-գենուկատաների» կոնֆերանսում՝ Դ . Անանունի մեռքով (Տես «Պայքար» , 1917 թ . , № 253) : Վերջինիս հետ միասին նա այսուհետեւ

սպահ մի մաշել և «ԱՄՀակե-ի շեմքերը—զավանելով սպեցիֆիկներից վամանց հետ մեկտեղ այն կարծիքը, թե հնարավոր ե և ողտակար հայ վաճառականության սնանկացած այդ ցուցանակի ներքո վահառքի հանել մենչեւիլյան սոցիալիզմի փիթած ապրանքը։ 1918 թ.-մայիսին Թիֆլիսի Ազգային Խորհրդի կողմից Արշ. Զուրարյանը և Համբ Ռէանջանյանը, վորպես պատգամավոր մեկնում են Ենթին և Վենենա՝ հայերի համար գերմանացիների և ավտիրացիների հոգանակորությունը խնդրելու թյուրքերի դեմ... Վերագրանալով Վրաստան և անկարող լինելով հաշտվել վրաց մենշևիզմի հայությոց քաղաքականության հետ՝ Զուրարյանը թեքվում ե դեպի «ձախ»—զլուի կանգնելով այսպես կոչված «ինտերնացիոնալիստ» սոցիալ-գեմոկրատներին։ Այս խմբակի գործունեյությունը հանրածանոթ է։ Սա մենշևիզմի «ձախ» կամ հայկական վարիանտն եր։ և միայն այդ։ Չը մոռանանք, վոր մի ժամանակ Թիֆլիսում «ձախ» եր և «ինտերնացիոնալիստ» անդամ դաշնակցական «Աշխատավոր»-ը, վորի 1919 թ. մայիսմեկյան համարում զետեղված կոչը վերջանում եր։ «Կեցցե՛ Յերբորդ Կոմմունիստական ինտերնացիոնալի» բառերով... Այդ չեր խանդարում «ձախերի» ներկայացուցիչ կ. Նավասարդյանին Բ. Խշանյանի հետ միասին վողջույնի խոսք ասել նաեւ Դեղին ինտերնացիոնալի ներկայացուցիչներին, յեր սրբնք Թիֆլիս ժամանեցին 1920 թ. աշնանը։ Նույն արդ «ձախ», «ինտերնացիոնալիստական» Փրազիլուսպիան չը խանդարեց զուրարյանական «Նոր Խոսք» թերթին՝ վողջույնի խոսք ասելու հույն հյուրերին։ Նրանց ժամանման քաղցր առիթով...»

Հաճույքի զգացումով չե, վոր արձանագրում ենք անհերքելի ոյս փաստերը։ Կրկնում ենք—զիստակցում ենք պատմական հայորդականության այն կապը, վոր ողակում և մեր կուսակցությունը ե՛ Բ. Կնույնյանի ե՛ Ա. Զուրարյանի ամձնական վորոշ արժանիքների և ծառայությունների հետ։ Յեկ «ազգանշելի» թեքում չենք նկատում կուսակցական գծից, յերբ կամպանիայի կարգավահենությունը իր հումանիզմով մեծարող խոսքի յե արժանացնում Ա. Զուրարյանին՝ պրոլետարիատի ու հեղափոխության ովախն կատարած իր ոշխատանքների համար։ Սակայն դարձյալ հարց և առաջանաւմ՝ ինչո՞ւ յերկու տարբեր չափ միենույն պարզ հաշվի մեջ։ Ինչո՞ւ կարելի յե պատմական արժանի տուրքը տալ Զուրարյանին իր բարեմասնությունների համար, թեև նա սկսեց և ավարտեց իր

կյանքի ուղին հավատարիմ մնալով ոսկորայունիզմին, բայց չի կարելի պատմական նույնպիսի տուրք տալ մի Ալ. Ռուբենու, վոր սկսեց քաղաքական իր կյանքը նույնպես, առնեք, վորպես ոսկորույունիստ, բայց ավարտեց այն վորպես հեղափոխական-բայց շնչիկ:

Կամ աեղի ունի բայլչիզմի պատմության Փալմիֆիկացիայի բարկու գեղգում ել: Կամ աեղի չունի այդ և վոչ մի դեղքում՝ վորչափի յերկու գեղգում ել անցյալի գնահատությանը մոտենում ենք՝ զեկավար ունենալով յերեռւյթների ըմբոնման մարքսիստական-լենինյան մեթոդը: Սակայն ո՞ւր մարքսիզմ-լենինիզմ և ո՞ւր գուսանական պատմահայեցողություն, վոր ձեւակերպում և յերեռյթների մասին իր հատուկ կարծիքը՝ նայած թե վորտեղից և փչում քաղաքական քամին:

Խնդիրը մերովը չե միայն և վոչ ել լենինյան-մարքսիստական հետևողականությունը: Խնդիրը ժաղաքական այն տրամադրությունների և նապատակների մեջն և, վոր գրանուրում և մասնավորապես Ե. Սուրենն՝ իր պարբերաբար կրկնվող գրական յերեռյթների ժամանակ:

Կրկնում ենք՝ 1921թ., յերբ Ե. Սուրենը պայքարում եր Հայաստանի կոմկուսի այն ժամանակվա զեկավարության դեմ՝ նա փորփորում եր անցյալը և աննախնթաց մոլեգնությամբ նշանակում հենց «բայլչելիկացած մենչելիզմի» այն հոսանքը, վորի զեկավարին այսոր մեծարում և մելամաղձորեն՝ վորպես «անցած գնացած կոմմունիստ ընկեր»: Այն ժամանակ անտեսվում եր սպեցիֆիզմը, վորովհետեւ այնպես եր յերեռում մարդու աչքին, քվամ եր, թե Խորհրդային Հայաստանի զեկավարությունը հանձնված է վաստորեն զուրարյանականների ձեռքը: Այսոր քվամ և դարձյալ այնպես է յերեռում մարդու աչքին, վոր իշխանության ու կուսակցության զեկը Հայաստանում գտնվում և բայլչելիկացած սպեցիֆիկմեների կամ ավելի նիշտ՝ սպեցիֆիկացած բայլչելիկմերի ձեռքին: Յեկ այս առթիվ, զերեզմանափորի անորինակ ջանասիրությամբ և Սուրենը լույս աշխարի և համար սպեցիֆիկմի վաղուց նեխված դիակը ու ծախու զնում այն, վորպես ամենից թարմ, ամենից համեղ ժաղաքական մի դելիկատես: Բարի ախորժա՞կ: Բայց թող ընկ: Ե. Սուրենը վերցնի դարձյալ սազը և զվարթ նեխսի վրա վերհիշի իր հին յերգը: 1921թ. այն տողերը զեթ՝ վորտեղի Ալ. Մյասնիկյանին հանձնաբարում եր վորպես «հայ մարք-

սիստական գրականության մեջ հայտնի Ալ. Մարտունիք (տես «Կարմիր Աստղ», 1921, № 51): Մինչև 1921 թ. «Ալ. Մարտունիք» անունով ընկ. Ալ. Մասնիկյանը «Հայտնիք» յեր միայն ու բացառապես սպեցիֆիկյան գրականության մեջ: Զի՞ նշանակում առարգյուք, թե 1921 թ. սպեցիֆիկյան գրականությունը մարդկաստական գրականություն եր Ե. Սուրենի համար:

Այսոր մոռացության են տրված նաև այս տողերը: Մարտունին և իր ընկերները հանձնաբարպում են այսոր վորպես «ուրիշ կուսակցություններից մեզ ժառանգություն անցած հատ ու կենտ ինտելիգենտներ»: Կա սկզբունք այսուղ, թե միայն՝ անվողնաշար ինտելիգենտին հասունկ վասթարակույն տեսակի անսկզբումբայուրյուն: Կամ թե՝ այսո՞ր ևս Ե. Սուրենը կանգնած է նույն այն տեղը, վարտեղ կանգնած եր 1921 թվին, յերբ թվում եր նըստի, թե կուսակցության «խորհրդային գիծը» խնդաթյուրվում է, վերասերվում, ընթանում մանր բուրժուական, դավառական-մեջանական գերազանց տարերքի հունով...

Թվում է, վոր ճիշտ ե թե մեկը, թե մյուսը: Պանիկյորությունը սնունդ է տալիս անսկզբունքայնության, իսկ վերջինն թե է տանում պանիկյորությունից: Յերկու գեղքում ել լինկ. Ե. Սուրենի ժաղաքական յելույյը ազդանշում է միայն մեզ շրջապատող մեջանկան, մանր բուրժուական տարերքի կողմից սպանացող վտանգի հիպերտրոֆիկ գերազանսիառուրյունը կամ գերազնահատուրյան հիպերտրոպիան:

Գետք եր կարծել, թե վտանգը բաղխում է մեր զուռը դրսից: Յեզ վտանգի ամեն մի գերազնահատում, պետք եր կարծել, թե մեր զուռը գրսից բազմող այդ վտանգի գերազնահատումը միայն կարող է լինել: Բայց կան մարդիկ, վորոնց թվում ե, թե վտանգը բացել է զուռը և ներս մտել արդեն տուն: Ավելին, վոր նա չողել է արդեն և սեղմում է իրենց կոկորդը: Սա արդեն վտանգի գերազնահատման այն գեալքն ե, յերբ հավար են կանչում և խնդրում, վոր դրսից սպնության գան...

Ե. Սուրենի հավարը հիշեցնում է այդ տեսակետից ընկ. Զինովի «Եպսիայի փիլիսոփայություն» գիրքը: Մեկը՝ Ռւսարյալը՝ յերակետ ունենալով սմենովեխովյան իր փիլիսոփայությունը բուրժուական պետականության և խորհրդային իշխանության ներքին «Հարազատության» մասին, մատնանշել և միաժամանակ խորհրդային իշխանության և կոմկուսի բուրժուական վերասեր-

ման հնարավորությունները : Ընկ . Զինովիկը կանգ առնելով Ռւսությալովի այդ փիլիսոփայության վրա ժամանակի յերեսլի «ազգանշան» համարեց այն : Նրան թվում եր , այդպես եր յերկաւմ նրա աչքին , թե Ռւսարյալովն «աղդանշում» եր խորհրդային իշխանության և կոմմունիստական կուսակցության վերասերման սեալ փաստը : Վատանքը , թվում եր , չեր ծեծում դուռը , նա արդեն մտել եր տունն ու պատրաստվում եր չոպել զոհի ըկին : Այս եր պատճառը , վոր Զինովիկ կոչ արեց անկառական մասային՝ ոգմության գալ Նուկա-Պե-Բե-ին՝ վտանգը չեզաքանչելու համար : Կուսակցության 14-րդ համազումարին ընկ . Զինովիկ դվիսավորած ոսպառողիցիան առաջարկում եր վերացնել այդ վտանգը . . . կուսակցության դեկավարությունը փոխելու միջոցով :

Նույն յերեսութը հայավարի կրկնվում է հիմա : Դ . Անանունը մեզանում Ռւսարյալովի վերումն ե , իսկ «Յերկու տեսնդենց» այլ ինչ չե , քան՝ «Եպոխայի փիլիսոփայության» , և անբաժին , Հանրամատչելի հրատարակությունը՝ Լուսու բարբառով :

«1925 թվին մեր Հեղափոխությունն ակնհայտ պատրաստվում ե անցնելու ինչ վոր սահմանադրություն : Գրեթե Փիլիքապես լավում են պատմության քայլերը : Վերջանում է մի գլուխ , —սկավում և մյուսը : Հաշիվ տալ ինքնիրեն կատարվողի իմաստի մասին —առաջնակարգ մի խոդիր ե : Ամբողջ կուսակցությունը , ամբողջ յերկիրը պետք է կարողանան իրանց համար ձեռկերպել հիմնական գծերով վերապատճի իմաստը :

Այս սողերով եր սկսվում Զինովիկի «Եպոխայի փիլիսոփայությունը» :

Նույն իմաստությունը չե՞ , վոր քարգմանում է իր բարբառով ընկ . Ե . Սուրենը հետեւյալ սողերով , ուր ակնարկած և 1922 թ . յերկրորդ կիսից Դ . Անանունի կատարած մետամորֆոզի ժամանք .

«1922 թ . յերկրորդ կիսից —կարծես ինչ վոր գաղտնի հայտնությամբ ըստ ինքյան «զիտակցվում ենք , վոր ամեն ինչ կատարվել ե ամենազեղեցիկ կերպով Խորհրդային Հայաստանում , ինչպես վոր գծել եր են ամենից «Հեղափոխական մարքսիզմը» , նախադուշակել եյին են ամնից «առաջին մարքսիստները» («Մարտակոչ» , № 27) :

1922 թ . յերկրորդ կիսից ի վեր : Այսինքն մոտավորապես այն ժամանակներից ի վեր , յերբ , Ե . Սուրենին սկսում եր թվալ , թե մեր կուսակցության դեկավարությունն անցավ սպեցիֆիկների

ձեռքը... Յեվ նույն այդ ժամանակից չե՞ , վոր Դ . Անանունի սիրաբ ջերմացավ «Հարազատության» նոր զգացումով : «Հարազատություն»՝ այս անդամ արդեն հանգեց Հայաստանի խորհրդային պետականության : Զուգագիտությունը լիակատար ե : Այս բավական և գաղափարական կամուրջ նետելու սպեցիֆիկմի և «Յերեւանի կոմկուսի» միջև , «ազգանշելու» վերջինիս զեկավարության րին չոզած սպառնալիքը : Յեվ դարձյալ պարզ և յերակացությունը՝ փոխել «Յերեւանի կոմկուսի» զեկավարությունը : Գե՞ վոր «կոմմունիստական կազմակերպությունը տատանումներից զերծ պահելու համար չի խնայվում անդամ կոմինտերի իննամյա (sic!) նախազահր» («Մարտակոչ» № 33) :

Ջինովելից ընկ . Ե . Սուրենը տարբերվում է , ինչպես տեսնում եք , նրանով , վոր մարդարեանում և խոշոր հապաղումով , լսում և «պատմության քայլեր» փոքր ինչ ուշ , թեև ունի միաժամանակ նույն այն առայժմաւթյունը , վոր «ազգանշում» և վոչ միայն վրատանդը ծննդելու տարին , այլև նրա կիսամյակը : Ու բնորոշ ե դարձյալ , վոր վասնդի գեմ ողնության հասնելու կոչն արմում և վոչ թե ներքին , կուսակցական կարգով , այլ անկուսակցական մասսայի հասարակական կարծիքն ոգնության կանչելու միջոցով : Բազգում հրատարակված «Հայարտան» կամ Թիֆլիսում հրատարակվող «Մարտակոչ»-ի հիերում լույս տեսնող հոդվածներն ամենից տառաջ ազդանշում են հենց «Ճախ» պանիկյորության հատկանշանական այս կողմը : Խոսքով՝ մոլուսնդ կուսակցական , շահումյանական լենինիստ , զործով՝ անկուսակցական , զուրաբովից և նույնիսկ... սպեցիֆիկ : Քանի վոր վատթարագույն տեսակի սպեցիֆիզմ չե՞ , նստել Բաղու կամ Թիֆլիս և տարիներ շարունակ տառակել Հայաստանի հոգսերով , «ողնության» կանչել «յերերին» : Խոսքով՝ «Ճախ» , դործով՝ «աջ» : «Չախ» Փրադ—«աջ» վարքագիծ : Արդյոք հենց այդ չի նշում այն ներդաշնակությունը , վոր ստեղծվել և որյեկտիվորեն՝ Դ . Անանունի դրբե առթիվ մեր գեմ սկաված աջ ու «ահյակ» արշավանքների մեջ : Յեվ արդյոք արդարացի չեր ընկ . Ս . Կասյանը , յերբ Ե . Սուրենի յելույթը կապում եր ուզգակի... Դաշնակցության հետ : Որյեկտիվորեն համերաշնուրով գեմ ակաված աջ ու «ահյակ» արշավանքների մեջ : Յեվ արդյոք արդարացի նա գարճնում և ըստ եյության պայքար՝ Հայաստանի Խորհրդային իշխանության Ա . Կոմմունիստական կուսակցության գեմ : Համերաշխության այս յերեսույթը վաստ ե , դը-

բախտաբար, և այն ակնհայտ ե նույնիսկ մանրամասնությունների մեջ։ Մինչ այն աստիճան, վոր կրկնելով, կարծես, Մ. Վարանդյանի մեղադրանքը, մութ ակնարկներ են արվում շարունակ այն մասին, թե Դ. Անանունի վերջին հատորը տպագրված ե՝ «ազնիվ բարեկամային» աշակցությամբ և «արդար վաստակով» կուտակած թուրքական լիրաների և ամերիկյան դոլարների ընկերային դաշտագոյի արտահանությամբ։ («Մարտակոչ» № 26 և այլուր)։ Լենինյան-մարքսիստական քննադատության հատու զենքը վերածվում ե այստեղ բամբասանքների բութ գանձակի, վորով մանր բուրժուական, մեշտանական, նացիոնալիստական տարերքին յենթարկված «քննադատորեն մտածող անձնավորությունը», հավասարակշռությունը կորցրած, հարվածում ե աջ և աջ յակ։ Յեկտեղին չե՞ վերհիշել այստեղ Ա. Մարտոնու խոսքը՝

«Իշխանյանները մի ժամանակ հարմարեցնում եյին մարքովով լիրերալիզմին, այսոր մեր ուսմունքը հեղափոխական մարքսիստ կոչվածներից վամանք դերի յեն զարձնում մեշտանական, մանր-բյուրզերական և նացիոնալիստական տարերին» («Նորք», № 4, էջ 127)։

Այս տեսակետից սակայն «Ճախ» պահիլորության հայկական վարիանտը բաժանում է ՎԿՊԲ-ի և Կոմինտերնի «Ճախ» ուղղողիցիայի ընդհանուր ճակատագիրը։

Յեկ ի՞նչ են մատնում ընկ. Ե. Սուրենի այս, պարբերաբար, տարեց-տարի կրկնով խոտերիքական յելությները, յեթե վոչ նրա հեղափոխական պերսպեկտիվների կորուսը, քերահավատությունը դեպի մեր կուսակցական և խորիդային դեկալարությունը։

«Համովված ենք—դրում ե ընկ. Ե. Սուրենը—վոր խորհրդային իշխանությունը մարդկային պատմության մեջ և Արարատյան դաշտում բացել ե մի նոր էջ, աննախնթաց ու աննման . . .» («Մարտակոչ» № 26)։

Դարձյալ՝ «աննախընթաց, աննման» . . . Հարցնող լինի՝ ինչո՞վ և «աննախընթաց և աննման» Արարատյան դաշտում խորհրդային իշխանությունը։ Մի՞թե նրանով, վոր վեց տարի շարունակ հարցանիշի տակ յեղել նրա խորհրդային դիմուլ կուսակցության դեկավարությունը։ Կամ մի՞թե կարծում ե Ե. Սուրենը, թե հնարավոր եր պատմության «նոր էջ» բացել Արարատյան դաշտում տուած այդ գծի, տուած այդ զեկավարության։

Այդպիսի գիծ, այդպիսի զեկավարություն, յեղել և անշուշտ

և , կոնկրետ իր արտահայտությամբ , այն մշակվել եւ ու կենսադրժուկը ամենից առաջ հենց «Արարատյան դաշտում» :

Սակայն չի կարելի քննել Հայաստանի Կոմկուսն ինչյան , մեր խորհրդային աշխատանքն ինչյան , այսինքն՝ կտրված զրսի աշխարհից , Անդրկոմվկասի ու Խորհրդային Միության կուսակցական և պետական շաղկատից ու զեկից անկախ : Սա կը լիներ վատթարագույն անսակի , վերաբերման շրջանի , անանունյան սպեցիֆիստական մի մասայնություն :

Խորհրդային Հայաստանի պետական վիճարարությունը չեր կարող տալ վորեւ արդյունք 6-7 տարվա ընթացքում , յեթե չը լիներ նրա սերտ կազմ խորհրդային Անդրկոմվկասի և ամբողջ Խորհրդագոյին Միության հետ , և , յեթե Հայաստանի Կոմկուսը չը լիներ մի կազմակերպություն , վորի աշխատանքն ու զեկավարությունը ուղարկուն կազմած են ՎԿՊԲ-ի ընդհանուր աշխատանքի և զեկավարության հետ , կամ , յեթե Հայաստանի Կոմկուսի ուսուցիչներն ու առաջնորդները չը լինեյին հենց ՎԿՊԲ-ի ուսուցիչներն ու առաջնորդները :

Մենք յերախտագիտության խորը զգացումներ ենք տածում գեղի հայ բանվորական շարժման հին գվարդիան—գեղի նրա անմիջական ուսուցիչներն ու առաջնորդները : Մենք գիտակցում ենք , վոր գեռ շատ բան կա անելու , մասնավորապես այդ հին գվարդիայի լավագույն ներկայացուցիչների՝ Ս . Շահումյանի և Ս . Սպահագորյանի , պրոլետարիատին և կուսակցությանը մատուցած ծառայությունը վեր հանելու և նրանց զբարչ արտադրությունն ու կյանքի դորձը յերիտասարդ սերնդին մատչելի անելու համար :

Բայց մենք չենք թագնում վոչ վոքից , վոր առաջին իրամայական մեր պարտականությունն ենք համարում՝ մեր բանվորության և յերիտասարդ սերնդի գաստիարակության աղբյուր զարձնելու մեր ավելի խոչըր ուսուցիչների—Մարքսի , Ենդելսի և Լենինի ու նրանց անմիջական աշակերտաների կյանքի ու գործի որինակը , մաքի ու զբարչ ստեղծագործությունը : Վատթարագույն տեսակի սպեցիֆիստական թերում , անանունյան սպեցիֆիզմ կը լիներ իրոք , յեթե մենք կուսակցական զարգացման շարահարություն և կուսակցության յերախտավոր նախնիքներ և ուսուցիչներ վորոնեցնք բացառապես ազգային գծով՝ ինչպես արամագիր են անել վոմանք :

Մեդ շրջապատող բոլոր վտանգներին ու բոլոր հնարավոր թե-

քումներին դիմադրավելու համար՝ անհրաժեշտ և նախ և առաջ, վոր բովանդակ մեր աշխատավորությունը և առաջին հերթին մեր պրոլետարիատն ու իր կուսակցությունը, հաղթահարելով ազգային սահմանափակության և նացիոնալիստական մտայնության ստեղծած բոլոր խոչընդոտները, ամրացնեն իրենց գործնական ու գաղափարական կապը խորհրդային յերկրների ու ամրող աշխարհի հեղափոխական կենդանի պայքարի հետ :

Հեղափոխական կենդանի պայքար : Այդ և անհրաժեշտ ամենից տռած կոմմունիստորեն դաստիարակվող յերկտասարդ սերնդին : Իսկ մեռածներին թողնենք, վոր թաղեն դարձյալ իրենք՝ մեռելները :

Հ. Գ. — Ընկ. Ե. Սուրենի հոգվածում հանդիպում են նուև մուլտ աղբյուրներից առնված անձնական, բացարձակորեն անհիմն կամ հիմնովին սիսալ ակնարկներ՝ բանկետային և այլ զվարթ կամ ախուր նյութերի շուրջը, վորոնցով չենք ուզում քրազեցնել ընթերցողին։ Դրական բամբասանցների գեմ քաջարար սպառազինված հեղինակը պետք է զոր զեթ պարկեշտություն ունենար դրական խոսքը նաև դրախտություններով «պարագալ վախտի խաղալիք» չը դարձնելու։

8




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- | | | |
|------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------|
| I. | Դ. Անանունի վերջին հատորը և նրա շուրջը վերսկաված
գրական արշավանքը | 3 հզ |
| II. | Ընկ. Ե. Սուրենի հարձակողականը կամ՝ անունը կա—
ամանումը չկա | 11 » |
| III. | Դիալեքտիկական մտակալիզմի և գուսանական
պատմահայեցողության յերկու տեսդեմնց անցյալի լու—
սարանության խնդրում կամ՝ ընկ. Ե. Սուրենը Սո.
Շահումյանի դեմ | 23 » |
| IV. | Գրական ռեցիդիվ պատմական հաջորդականության
քերդիայի խնդրում կամ՝ «ձախ» պամիկյորության նոր
պտույտը «վերասերման» քերդիայի հին բնագավառում | 34 » |



[2n]



A-II
77551